

Յ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Կոմս Լ. Ն. Տոլսոյի

Մասք. Գլ. ԺԸ. 21. Այն ժամանակ մօտեցաւ նրան Պետրոսը և ասաց. Տէ՛ր, եթէ եղբայրս մեղանչէ իմ դէմ, քանի՞ անգամ պէտք է ներեմ նրան, մինչև եօթն անգամ 22, Յիսուս ասաց նրան. չեմ ասում քեզ մինչև եօթն անգամ. այլ մինչև եօթանասուն անգամ եօթը:

Մասք. Գլ. Է. 3. Ինչո՞ւ տեսնում ես շիւղը եղբօրդ աչքում, իսկ քո աչքում եղած գերանը չես տեսնում:

Յովի. Գլ. Ը. 7. ... ով որ ձեր մէջից անմեղ է, թող առաջ նա քար քցէ դրա վրայ:

Ղուկաս. Գլ. 2. 40. Զը կաշ աշակերտ՝ աւելի լաւ, քան իր ուսուցիչը. ամենայն մարդ, որ կատարեալ դառնայ, կը լինի իր ուսուցչի նման:

I

Ինչքան էլ մարդիկ աշխատում էին, մի քանի հարիւր հազար հոգով մի փոքրիկ տեղ հաւաքուած, այլանդակել այն գետինը, որի վրայ կուշ էին եկել, ինչքան էլ սալում էին քարերով հողը, որպէս զի ոչինչ չը բուսնի նրա երեսին, ինչքան էլ պոկոտում էին ամեն մի նորածիլ խոտ, ինչքան էլ քարածուխ ու նաւթ էին ծխում, ինչքան էլ խուզում էին ծառերը և դուրս քշում բոլոր անասուններին ու թռչուններին,— գարունն էլի գարուն էր, նոյն իսկ քաղաքում: Արեւ տաքացնում էր, խոտը, կեանք առնելով, աճում ու կանաչում էր ամեն տեղ, ուր չէին քերել գետինը— ոչ միայն ձմեռիքներին սիլվամարգերում (газоны), այլ և սաղաքարերի արանքներում,— և կեչինները, սօսիներն ու թխններն (черемуха) բանում էին իրանց մա-

ծուցիկ ու հոտաւէտ տերեւները, լորիններն ուռճացնում էին իրանց տրաքուող բողբոջները. ճայեակները, ճնճղուկները ու աղաւնիները արդէն գարնանային կերպով ուրախ-ուրախ պատրաստուած էին բները, և պատերի մօտ բզզում էին արևից տաքացած ճանճերը: Ուրախ էին և՛ բոյսերը, և՛ թռչունները, և՛ միջատները, և բնիսանները: Բայց մարդիկ—մենք, հասակաւոր մարդիկ—չէին դադարում խաբելուց ու տանջելուց իրանք իրանց և միմեանց: Մարդիկ այնպէս էին համարում, թէ նուիրական է և կարևոր ոչ այդ գարնանային առաւօտը, ոչ Աստծու աշխարհի այդ դեղեցկութիւնը, որոնք տուած են բոլոր էակների բարօրութեան համար,—գեղեցկութիւն, որ տրամադրում է մեզ դէպի խաղաղութիւն, համերաշխութիւն և սէր,—այլ նուիրական է և կարևոր այն, ինչ որ իրանք են հնարել մէկը միւսի վրայ իշխելու համար:

Այդպէս՝ նահանգական բանտի գրասենեակում նուիրական և կարևոր էր համարւում ոչ այն բանը, որ բոլոր կենդանիներին և մարդկանց տուած են գարնան գորովը և հրճուանքը, այլ նուիրական և կարևոր էր համարւում այն, որ նախընթաց օրը ստացուած էր մի թուղթ որոշ համարով, կնիքով և վերահազրով այն մասին, թէ այդ օրը, ապրիլի 28-ին, առաւօտեան ժամը 9-ին պէտք է դատարան տարուեն բանտումը պահուող երեք հատ քննութեան ենթակայ կալանաւորներ, երկու կին և մի տղամարդ: Այդ կանանցից մէկը, իբրեւ ամենածանր յանցագործը, պէտք է ուղարկուէր առանձին: Եւ ահա, այդ հրամանագրի հիման վրայ, ապրիլի 28-ին, առաւօտեան ժամի 8-ին կանանց բաժնի մուտք ու դարչանոտ սրահանցքը մտաւ առաջ վերակացուն: Նրա յետևից սրահանցքը մտաւ տանջուած գէմքով և ալևոր ու խուճուճ մազերով մի կին, հագած արիղապատ թեքերով մի բաճկոն և մէջքին կապած կապոյտ երիզաւոր գօտի: Դա վերակացուն էին էր:

—Մ'աւօլային էք ուղում,—հարցրեց նա, օրապահ վերակացուի հետ մօտենալով սենեակների՝ սրահանցքի մէջ բացուող դռներից մէկին:

Վերակացուն զննդացրեց կողպէքը և, բանալով սենեակի դուռը, որից դուրս հոսեց սրահի օդից էլ աւելի դարչանոտ օդաաղաղակեց:

—Մ'աւօլա, դատարան,—ու նորից վրայ դրեց դուռը, սպասելով:

Մինչև անգամ բանտի բալում զգացւում էր դաշտերի թարմ ու կենդանարար օդը, որ քամին բերել էր քաղաք: Բայց սրահանցքում կանգնած էր կուպրի ու ննխուածքի հոտով տո-

գորուած օդ, որ իսկոյն վհատութիւն և տրամութիւն էր բերում ամեն մի նոր մանողի վրայ: Այդ բանը՝ զգաց իր վրայ բակից եկած վերակացունհին, չը նայելով, որ նա սովոր էր վատ օդի: Մտնելով սրահանցքը, նա յանկարծ յոգնածութիւն զգաց և քուն եկաւ վրան:

Սենեակում իրարանցում կար,—լուում էին կանացի ձայներ և բորիկ ոտների քայլեր:

—Դէ, արագ ժաժ արի, Մասլօվա, քեզ եմ ասում,—աղաղակեց աւագ վերակացուն սենեակի դռնից:

Մէկ երկու բոպէից յետոյ առոյգ քայլերով դուրս եկաւ դռնից, արագ շուռ եկաւ եւ կանգնեց վերակացուի մօտ ցածրիկ հասակով եւ շատ լիքը կրծքով մի ջահէլ կին, որ մոխրագոյն խալաթ ունէր հագին, սպիտակ բաձկոնի եւ սպիտակ ներքնազգեստի վրայից: Կնոջ ոտներին քաթանի գուլպաներ էին, գուլպաների վրայից բանտային հողաթափներ. գլխին կապած էր սպիտակ գլխաշոր, որի տակից անշուշտ դիտմամբ դուրս էին թողնուած սեւ ու գանգուր մազերի մի քանի խոպոպիկներ: Կնոջ ամբողջ երեսը այն առանձնատեսակ սպիտակութիւնն ունէր, որ լինում է երկար ժամանակ փակ մնացած մարդկանց երեսներին եւ որ յիշեցնում է գեանախնձորի՝ նկուղում արձակած ծիւրը: Նոյն տեսակ էին եւ փոքրիկ, լայն ձեռները եւ սպիտակ ու լիքը վիզը, որ երեւում էր խալաթի մեծ օձիքի յետեւից: Այդ դէմքի մէջ, մանաւանդ նրա անփայլ գունատութեան վրայ, առանձնապէս տպաւորիչ էին շատ սեւ, փայլուն, փոքր ինչ ուռած, բայց խիստ վառվռուն աչքերը, որոնցից մէկը մի քիչ չիլ էր: Նա իրան պահում էր շատ ուղիղ, լի կուրծքը դուրս քցած: Դուրս գալով սրահանցքը, նա, գլուխը փոքր ինչ յետ քցած, նայեց ուղիղ վերակացուի աչքերին եւ կանգ առաւ, պատրաստ կատարելու ամեն բան, ինչ որ պահանջեն իրանից: Վերակացուն արդէն ուզում էր փակել դուռը, երբ այնտեղից դուրս ցցուեց մի սպիտակահեր ու գլխաբաց պառաւ կնոջ գունատ, խստահայեաց ու կնճռոտ դէմք: Պառաւը սկսեց ինչ-որ ասել Մասլօվային: Բայց վերակացուն դուռը հուպ տուեց պառաւի գլխին եւ գլուխը անյայտացաւ: Սենեակում լսուեց մի կնոջ քրքիջ: Մասլօվան նայապէս ժպտաց եւ շուռ եկաւ դէպի դռան փանդակապատ փոքրիկ պատուհանը: Պառաւը միւս երեսից դէմքը կպցրեց պատուհանին եւ արտասանեց խոպոտ ձայնով.

—Ամենից շատ զգոյշ կաց աւելորդ խօսելուց. մի բան ասա ու խօսքիդ վրայ հաստատ մնա:

—էհ մի բան կը լինի էլի, հօ սրանից էլ վատ չի լինի,
—ասաց Մատթիան:

—Ի հարկէ մի բան կըլինի եւ ոչ թէ երկու,—ասաց աւագ վերակացուն, իշխանաւորական վստահութեամբ իր սեփական սրամտութեան վերաբերմամբ:—Հայգէ իմ յետեւից:

Պատուհանից նայող պառաւի աչքը անյայտացաւ, իսկ Մատթիան առաջ անցաւ դէպի սրահի մէջ տեղը եւ փոքրիկ ուտորագ քայլերով գնաց աւագ վերակացուի յետեւից: Նրանք ներքեւ իջան քարէ սանդուխներով, անցան տղամարդկանց սենեակների մօտով, որոնք աւելի եւս զարշահոտ էին եւ աղմկալից, քան կանանց սենեակները եւ որոնց բոլոր դռնածակերից նրանց հետեւում էին ուշադիր աչքեր, եւ մտան գրասենեակը ուր արդէն պատրաստ կանգնած էին երկու ուղեկցող զինուորային հրացանը ձեռներին: Այնտեղ նստած գրագիրը տուեց զինուորներից մէկին թուրքերից ծխահոտած մի թուղթ եւ, մատնացոյց անելով կալանաւոր կնոջը, ասաց. «Ընդունիր»։ Զինուորը —մի գեղձուկ Նիժնի-Նովգորոդի կողմերից, կարմիր ու չեչու երեսով,—թուղթը դրեց վերարկուի թեւերի ծալքը եւ, ժպտալով աչքով արեց ընկերին,—մի լայնածնօտ չուվաշի,—ակնարկելով կալանաւորուհուն: Զինուորները կալանաւորուհու հետ ցած իջան սանդուխներից ու դիմեցին դէպի գլխաւոր մուտքը:

Գլխաւոր մուտքի դռան դռնակը բացուեց, եւ նրա չեմքից անցնելով բակը, զինուորներն ու կալանաւորուհին դուրս եկան պարսպից եւ գնացին քաղաքի քարած փողոցների մէջով:

Կառապանները, խանութպանները, խոհարարուհիները, բանուորները, աստիճանաւորները կանգ էին առնում եւ հետաքրքրութեամբ դիտում կալանաւորուհուն. ոմոնք ժաժ էին տալիս գլուխները ու մտածում. «այ թէ ուր է հասցնում մարդու» վարժաբը, մեր վարքին չը նմանող վարքը»: Երեխաները սարսափոտ էին նայում այդ աւագակուհու վրայ, հանգստանալով նրանով միայն, որ նրա յետեւից գնում են զինուորներ ու նա այժմ արդէն ոչինչ չէ կարող անել: Մի գիւղացի, որ բերած անուխը ծախելուց յետոյ պանդուկում թէյ էր խմել, մօտեցաւ նրան, խաշակքեց երեսը ու մի կոպէկ ողորմութիւն տուեց նրան: Կարանաւորուհին կարմրեց, իջեցրեց գլուխը ու ինչ-որ բան ասաց:

Զգալով դէպի ինքը ուղղուած հայեացքները, կալանաւորուհին աննկատելի կերպով, առանց գլուխը շուռ տալու, աչքի պոչով նայում էր իրան դիտողներին եւ այդ նրա վրայ դարձած ուշադրութիւնը ուրախացնում էր նրա սիրտը: Ուրախացնում էր նրա սիրտը նաեւ դարնանային օդը, որ այդտեղ մաքուր էր, համեմատած բանտի օդի հետ, բայց ման գալու սովորութիւնը կորց-

բած ու բանտի կոշտ-կոպիտ հողաթափները հագած ոտները ցաւում էին քարերը կոխելիս, եւ նա նայում էր ոտների տակը ու աշխատում որքան կարելի է թեթեւ քայլել: Անցնելով ավերի խանութի մօտով, որի առաջին՝ շորոր քալով շրջում էին աղաւնիները, որոնց ոչ ոք ձեռք չէր տալիս, կալանաւորուն հիշ մնաց ոտքով խփէր նրանցից մէկին. աղաւնին թռիչք առաւ ու, թափահարելով թեւերը, թռաւ ուղիղ կալանաւորուն հուսկանջի մօտով, հողմահարելով նրան: Կալանաւորուն հին ժպտաց ու յետոյ ծանր հոգոց քաշեց, յիշելով իր գրութիւնը:

II

Կալանաւոր Մասլովայի պատմութիւնը շատ սովորական պատմութիւն էր: Մասլովայի մայրը մի չամուսնացած ճորտ կին էր, որ իր կովապահ մօր հետ ապրում էր գիւղում երկու քոյր կալուածատէր օրիորդների մօտ: Այդ չամուսնացած կինը ամեն տարի երեխայ էր բերում, և, ինչպէս գիւղերում սովորաբար անւում է, երեխային կնքում էին, ու յետոյ մայրը կաթ չէր տալիս այդ անկոչ հիւրին, այդ անպէտք ու աշխատանքին խանգարող երեխային, և նա շուտով մեռնում էր քաղցից:

Այդպէս մեռել էին հինգ երեխայ: Նրանց բոլորին էլ կընքում էին, յետոյ կաթ չէին տալիս, և նրանք մեռնում էին: Վեց-երորդ երեխան,—մի անցուորական բօշա հօրից,—աղջիկ էր, և նրա վիճակն էլ նոյնը կը լինէր, բայց այնպէս պատահեց, որ երկու պառաւած օրիորդներից մէկը մտաւ գոմանոցը յանգիւմանելու կովապահներին սերից կովահոտ գալու համար: Գոմանոցում պառկած էր ծննդկանը իր գեղեցիկ, առողջ երեխայի հետ: Պառաւ օրիորդը յանգիւմանութիւն արեց համ սերի համար, համ այն բանի համար, որ ծննդկան կնոջը ներս են թողել գոմանոցը, եւ ուզում էր արդէն դուրս գալ, երբ տեսնելով երեխային՝ գորովը շարժուեց եւ ցանկութիւն յայտնեց նրա կնքամայրը լինել: Այդպիսով նա կնքեց երեխային ու յետոյ, խղճալով իր սանիկին, կաթ ու փող էր տալիս մօրը, եւ աղջիկը մնաց կենդանի: Պառաւ օրիորդները հէնց այդ պատճառով «ազատուած» էին անուանում աղջկան:

Երեխան երեք տարեկան էր, երբ մայրը հիւանդացաւ ու մեռաւ: Կովապահ տատը դժկամակութեամբ էր պահում թոռին: Պառաւ օրիորդները, տեսնելով այդ, վերցրին աղջկան իրանց մօտ: Սեւաշիկ երեխան չափազանց կայտառ ու սիրեկան աղջիկ դուրս եկաւ, եւ պառաւ օրիորդները մխիթարւում էին նրանով:

Պատաւ օրիորդները երկուս էին—փոքրը՝ Սօֆիա Իվանովնան, որ աւելի բարի էր և աղջկայ կնքողն էր, և մեծը՝ Մարիա Իվանովնան, որ աւելի խիստ էր։ Սօֆիա Իվանովնան զուգուգում-զարդարում էր փոքրիկին, կարդալ էր սովորեցնում և ուզում էր տանու աղջիկ դարձնել նրան։ Մարիա Իվանովնան ասում էր, թէ աղջկան պէտք է այնպէս կրթել, որ լաւ բան անող, լաւ աղախին դուրս գայ, ուստի և խստապահանջ էր դէպի նա, պատժում էր նրան և մինչև անգամ ծեծում, երբ տրամադրութիւնը տեղը չէր լինում։ Այդպէս երկու տարբեր ազդեցութիւնների տակ մեծանալով՝ աղջիկը դարձաւ վերջը կէս աղախին, կէս տանու աղջիկ։ Այդպէս էլ անուանում էին նրան, միջին անունով, ոչ կատկա և ոչ կատենկա, այլ կատիւշա։ Նա կար էր անում, հաւաքում էր սենեակները, կաւճով մաքրում էր սրբերի պատկերները, բովում էր, աղում ու մատուցանում սուրճը, թեթեւ լուացք էր անում և ժամանակ առ ժամանակ նստում էր օրիորդների հետ ու կարդում նրանց համար։

Նրան ուղողներ կային, բայց նա ոչ մէկի կիներն էլ չէր կամենում լինել, որովհետեւ զգում էր, որ իրան ուղող այդ աշխատաւոր մարդկանց հետ ապրելը ծանր կը լինի իր նման աղայական կեանքի քաղցրութեանն ընտելացած կնոջ համար։

Այսպէս ապրեց նա մինչև 16 տարեկան հասակը։ Իսկ երբ 16 տարին լրացաւ, նրա աղջիկ-պարոնների մօտ հիւր եկաւ նրանց քրոջ որդին, մի հարուստ և իշխան ուսանող, և կատիւշան սիրահարուեց նրա վրայ, առանց համարձակուելու խոստովանել այդ նրան և նոյն իսկ ինքն իրան։ Յետոյ, երկու տարի անցած, այդ նոյն երիտասարդը, պատերազմ գնալիս, ճանապարհին մտաւ իր մօրաքոյրերի մօտ, մնաց նրանց մօտ չորս օր և ճանապարհ ընկնելու նախընթաց օրը հրապուրեց կատիւշային ու, վերջին օրը մի հատ հարիւր ուրելիանոց ճիւղով նրա բուռը, թողեց ու գնաց։ Նրա հեռանալուց հինգ ամիս անցած՝ կատիւշան հաստատ իմացաւ, որ ինքը յղի է։

Այդ ժամանակից՝ ամեն ինչ ընկաւ նրա աչքից, ու նա միայն այն էր մտածում, թէ ինչպէս աղատուի գալիք ամսութից, և սկսեց ոչ միայն անսիրտ ու վատ ծառայել օրիորդներին, այլ նոյն իսկ,—ինքն էլ չը գիտէր, թէ ինչպէս պատահեց, այդ,—յանկարծ մի օր սրտի հաւաքածը դուրս տուեց։ Օրիորդներին կոշտ-կոպիտ խօսքեր ասաց, որոնց համար ինքն էլ յետոյ զղջում էր, և խնդրեց, որ հաշիւը տան։

Եւ օրիորդները, որոնք սաստիկ տժգոհ էին նրանից, այդ ձակեցին նրան։ Նրանց մօտից նա աղախին մտաւ գաւառամասի պրիստավի մօտ, բայց այդ տեղում երեք ամիս միայն կարողացաւ

ցաւ մնալ, որովհետեւ պրիստաւը, մի յիսնամեայ ծերունի, սկսեց հետամուտ լինել նրան, եւ մի անգամ, երբ ծերունին առանձին եռանդ ցոյց տուեց այդ բանում, Կատիւչան բորբոքուեց, տխմար ու քաւթառ շուն անուանեց նրան եւ այնպէս հրեց կրծքին, որ նա վաչր ընկաւ։ Կատիւչային դուրս արին կոպտութեան համար։ Ուրիշ տեղ ծառայութեան մտնելն աւելորդ էր, շուտով ծնելու էր եւ նա տեղաւորուեց մի գիւղական այրի տատմօր մօտ, որ գինու առուտուր էր անում։ Երեխաբերքը հեշտ էր, բայց տատմէրը, որ գիւղում մի հիւանդ կին էր աղատել, վարակեց Կատիւչային ծննդաբերական ջերմախտով, եւ երեխային, որ տղայ էր, ուղարկեցին անտէր մանուկների ապաստարանը, ուր նա, ինչպէս պատմում էր տանող պառաւը, տեղ հասնելուն պէս մեռաւ։

Տատմօր մօտ տեղափոխուելիս՝ Կատիւչայի ունեցած-չունեցածը 127 ուրլի էր,—27-ը՝ աղախնութեամբ վաւատակածը, իսկ 100-ը՝ հրապուրչի տուածը։ Իսկ երբ տատմօր մօտից դուրս եկաւ նա, մօտը մնացել էր ընդամենը 6 ուրլի։ Նա փող պահել ամենեւին չը գիտէր,—իր վրայ էլ էր շատ ծախսում, ամեն ուղողի էլ տալիս էր։ Տատմէրը նրանից երկու ամսուայ ապրուստի—ուտելու ու թէյի—համար վերցրեց 40 ուրլի, 25 ուրլի գնաց երեխային ուղարկելու ծախս, 40 ուրլի տատմէրը պոկեց իբր պարտք կով առնելու համար, մի 20 ուրլու չափ էլ այնպէս, ձեռի հետ ծախսուեց շորեղէնի, ընծաների վրայ, այնպէս որ երբ Կատիւչան առողջացաւ, էլ փող չունէր ձեռքին ու պէտք է տեղ փնտռէր։ Տեղ գտնուեց մի անտառապետի մօտ։ Անտառապետը պտակուած մարդ էր, բայց նա էլ, պրիստավի պէս, հէնց առաջին օրից սկսեց հետամուտ լինել նրան։ Կինն իմացաւ ու, մի անգամ մարդուն Կատիւչայի հետ մենակ ընկելով սենեակում, վրայ պրծաւ, որ ծեծի Կատիւչային։ Կատիւչան զիմազրեց եւ կոխ սկսուեց, որի պատճառով նրան տանից դուրս արեցին՝ առանց աշխատածի վարձը վճարելու։ Այն ժամանակ Կատիւչան գնաց քաղաք ու իջաւ իր մօրաբրոջ տանը։ Մօրաբրոջ մարդը կազմարար էր եւ առաջ լաւ էր ապրում, բայց այժմ բոլոր պատուէր տուողներին կորցրել էր ու չարունակ հարբում էր, խմիչքի տալով ամեն բան, ինչ որ ընկնում էր ձեռքը։

Մօրաբայրն էլ մի փոքրիկ լուացքանոց էր պահում եւ նրանով համ ինքն էր կերակրում երեխաների հետ, համ էլ փուչ մարդուն էր պահպանում։ Նա Մասլովային լուացարարի տեղ առաջարկեց իր մօտ։ Բայց տեսնելով մօրաբրոջ մօտ ապրող լուացարար կանանց վարած ծանր կեանքը, Մասլովան

մլուլ էր տալիս եւ զանազան գրասենեակներում աղախնի տեղ էր փնտռում։ Եւ տեղ գտաւ մի տիկնոջ մօտ, որ աղքատ էր իր երկու գիմնագիրստ որդիների հետ։ Մի շաբաթ անցած, տիկնոջ մեծ որդին, որ 6-րդ դասարանի աշակերտ էր եւ արդէն բնական եկած տղայ, ուսումից կտրուեց ու էլ հանգիստ չէր տալիս Մասլովային։ Մայրը մեղքը ամբողջապէս Մասլովայի վրայ քցեց ու ճանապարհ դրեց նրան։ Նոր տեղ չէր ճարուում, բայց բանն այնպէս պատահեց, որ մի օր Մասլովան, սպասաւորներ յանձնարարող գրասենեակը գնալով, հանդիպեց այնտեղ մի տիկնոջ, որի թխիկի ու թեւաքայ ձեռները զարդարուած էին մատանիներով ու ասպարանջաններով։ Այդ տիկինը, տեղ փնտռող Մասլովայի դուրսէն իմանալով, տուեց նրան իր հասցէն ու հրաւիրեց իր մօտ։ Մասլովան գնաց։ Տիկինն ընդունեց նրան քաղցրութեամբ, հիւրասիրեց կարկանդակներով ու քաղցր զինով և իր աղախնին տունակ տալով՝ մի ինչ որ տեղ ուղարկեց։ Երեկոյեան սենեակը մտաւ մի բարձրահասակ մարդ, երկայն ալեխառն մազերով և սպիտակ մօրուքով։ Այդ ձերուհին իսկոյն նստեց Մասլովայի կողքին և սկսեց՝ փայլատակող աչքերով ու ժպտալով՝ զննել նրան և կատակներ անել հետը։ Տանտիրուհին կանչեց ձերուհուն միւս սենեակը և Մասլովան լսեց, որ տանտիրուհին ասում է իր մասին, թէ թարմ է, գիւղացի է։ Յետոյ տանտիրուհին կանչեց Մասլովային ու ասաց, թէ այդ մարդը գրող է, թէ նա մեծ փողի տէր է և թէ նա ոչինչ չի խնայի, եթէ Կատիւշան դուր գայ նրան։ Կատիւշան դուր եկաւ և գրականագէտը 25 ուրլի տուեց նրան, խոստանալով յաճախ տեսնուել հետը։ Փողերը շատ շուտ հատան, — Մասլովան վճարեց մօրաբորջը իր ապրուստի վարձը և առաւ իր համար նոր շոր, գլխարկ ու ժապաւէններ։ Մի քանի օրից յետոյ գրողը կրկին մարդ ուղարկեց նրա յետեւ։ Նա գնաց։ Այդ պարոնը նորից 25 ուրլի տուեց նրան և առաջարկեց տեղափոխուել առանձին բնակարան։

Գրողի վարձած բնակարանում ապրելիս՝ Մասլովան սիրեց մի ուրախ գործակատարի, որ նոյն բակումն էր կենում։ Կատիւշան ինքը յայտնեց այդ բանը գրողին և տեղափոխուեց մի ուրիշ փոքրիկ բնակարան։ Իսկ գործակատարը, որ խոստացել էր ամուսնանալ նրա հետ, առանց որ և է խօսք ասելու և, անշուշտ, ձգելով նրան, թողեց ու գնաց Նիժնի։ Մասլովան մնաց մենակ։ Նա սկզբում միտք ունէր մենակ ապրել բնակարանում, բայց թոյլ չը տուին։ Այն ժամանակ նա կրկին գնաց մօրաբորջ մօտ։ Մօրաբորջը տեսնելով նրա վրայ մօղային շորեր,

Թիկինոց ու գլխարկ, յարգանքով ընդունեց նրան և այլևս չը վրա-տահացաւ լուացարարի տեղ ստաջարկել, այնպէս համարելով, թէ Կատիւշան հիմա կեանքի աւելի բարձր աստիճանի վրայ է կանգնած: Այժմ արդէն լուացարար դառնալու կամ չը դառնալու հարց անգամ չը կար Մասլովայի համար: Նա կարեկցութեամբ էր նայում հիմա այն տաժանակիր կեանքի վրայ, որ վարում էին առաջին սենեակներում գունաթափ երեսով, նիհար թևերով լուացարարուհիները, որոնցից մի քանիսն արդէն վարակուել էին թոքախտով, լուացք անելով ու արդուկելով 30 աստիճան տաքութիւն ունեցող սապնադիորչու մէջ, ամառ-ձմեռ բաց պատուհաններով, և սարսափում էր այն մտքից, թէ ինքն էլ կարող էր մտնել այդ տաժանարանը:

Եւ ահա այդ միջոցին, երբ Մասլովան սաստիկ նեղ դրութեան մէջ էր, որովհետեւ չէր կարողանում ձարել ոչ մի հովանաւոր, նրան գտաւ ու տեղաւորեց անառակատնների գործակալուհիներին մէկը:

Մասլովան արդէն վաղուց էր ծխում, բայց գործակատարի հետ կենակցելու վերջին ժամանակները և այն օրից յետոյ, երբ այդ գործակատարը նրան թողեց ու հեռացաւ, նա, քանի գնում, աւելի ու աւելի էր սովորում խմել: Գինին գրաւում էր նրան ոչ միայն այն պատճառով, որ համով էր թւում, այլ ամենից չատ այն պատճառով, որ հնարաւորութիւն էր տալիս նրան մոռանալ իր քաշած ծանր օրերը և համարձակութիւն էր տալիս նրան ու վտանգութիւն իր արժանաւորութեան նկատմամբ, համարձակութիւն ու վտանգութիւն, որ նա չէր ունենում առանց գինու: Առանց գինու նա միշտ վնասութիւն էր զգում ու ամօթ:

Գործակալուհին հիւրասիրեց Մասլովայի մօրաբերովը և, հարեցնելով Մասլովային, առաջարկեց նրան մտնել քաղաքի լաւ անառակատններից մէկը, ամենալաւը, բացատրելով նրան այդ դրութեան բոլոր ձեռնտու կողմերը և առաւելութիւնները: Մասլովային մնում էր ընտրել կամ աղախնի ստորացուցիչ դրութիւն, որի մէջ նա անշուշտ պէտք է կնիքակուէր սղամարդկանց հետամտութեան, կամ թէ այդպիսի մի ապահով, հանգիստ ու օրինական դրութիւն: Բացի այդ, նա ուզում էր դրանով վրէժ հանել թէ իրան հրապուրողից, թէ գործակատարից, թէ այն բոլոր մարդկանցից, որոնք վատութիւն էին արել իրան: Վերջապէս հրապուրում էր նրան և նրա վերջնական վճռի պատճառներից մէկն էր այն, որ գործակալուհին ասաց նրան, թէ նա ինչ չոր ուղեւոր, կարող է կարել տալ իւր համար,— թաւշեայ, մետաքսեայ հագուստներ, պարահանդէսի զգեստներ՝ բաց

ուսերով ու կոներով: Եւ երբ Մասլովան երեակայեց իրան վառ դեղնագոյն միտաքսէ զգեստում սև թաւիչէ կարուածքով (ОТДѢЛ-КА) ու դէկօլաէ, էլ սիրտը չը կարողացաւ դիմանալ ու նա տուեց իր անցաթուղթը գործակալուն, որ հէնց նոյն երեկոյ կառք վարձեց ու տարաւ նրան Կիտայնովայի յայտնի անառակատունը:

Եւ այդ ժամանակից սկսուեց Մասլովայի համար այն Աստուածային և մարդկային պատուիրանների դէմ յարատև զանցառու կեանքը, որ վարում են հարիւր ու հարիւր հազարաւոր կանայք և որ վերջանում է տասը այդպիսի կանանցից իննի համար սաժանկի հիւանդութիւններով և վաղահաս զառամութեամբ ու մահով:

Առաւօտեան և ցերեկուայ ընթացքում ծանր քուն գիչերային քէֆերից յետոյ: Յետոյ, ժամի երկուսից կամ երեքից անց, յոգնած-յոգնած վեր են կենում կեղտոտ անկողիններից, սէլտէրի ջրով հովացնում գինուց այրուող կոկորդները, սուրճ խմում, ծոյլ-ծոյլ անց ու դարձ անում սենեակներում տանու հագուստով, բաճկոններով, խալաթներով, դուրս նայում լուսամուտներից, կիսաբերան հայնոյում իրար, յետոյ լուանում, օծում, անուշահոտ հեղուկներով սրսկում մազերն ու մարմինները, շորերի չափը փորձում, շորերի պատճառով վիճում անառականոցը պահող կնոջ հետ, զննում իրանց հայկու մէջ, ներկում երեսներն ու յօնքերը, ճաշին ուտում իւղալի ու քաղցր կերակուրներ, յետոյ հագնում վառգոյն և մարմինը կիսաբաց թաղնող մետաքսեայ շորեր, յետոյ դուրս գալիս դուրած, զարգարած զահլիճը, ուր ընդունում են ամեն տեսակ բնաւորութեան, հասակի և դասակարգի հիւրեր. այնուհետև զոռգոռոց, կատակներ, կոխներ, գինի, ծխախոտ, երաժշտութիւն, պարեր, երեկոյից սկսած մինչև լուսարաց, և չաքարեղէններ, ու դարձեալ գինի, գինի ու ծխախոտ: Եւ միայն առաւօտեան՝ աղատունն այդ բոլորից ու ծանր քուն: Եւ այդպէս ամեն օր, և ամառ, և ձմեռ, և լի օր, և տօն օր:

Այդպէս ապրեց Մասլովան եօթ տարի: Այդ ժամանակի ընթացքում նա փոխեց երկու անառակատուն և մի անգամ պատկեց հիւանդանոցում: Եօթերորդ տարին՝ անառակատուն մտնելու օրից և ութերորդ տարին՝ նրա առաջին անկումից յետոյ, այն ժամանակ, երբ նա 26 տարեկան էր, պատահեց նրան այն բանը, որի համար նրան բանտ նստեցրին և որի համար այժմ, վկայ ա-միս բանտում մարդասպան ու զոդ կանանց հետ պահելուց յետոյ, տանում էին նրան դատարան:

III

Այն ժամանակ, երբ Մալօլան, երկար ճանապարհից ջարդուած, իրան ուղեկցող զինուորների հետ մօտեցաւ նահանգական դատարանի շէնքին, նրան որդեգրող պառաւ օրիորդների աջ քրորդին,— իշխան Դմիտրիյ Իվանովիչ Նեխլիւզովը,— որ հրապուրել էր նրան, դեռ պառկած էր իր բարձր ու զսպանակաւոր խառնուած անկողնում, աղուամաղէ նեւքնակի վրայ, և ծխում էր, հօլլանդական կտաւէ մաքուր գիշերային շապիկ օձիքը բաց ու կրծքի ծալքերը արդուկած։ Սառած աչքերով նայում էր նա իր առաջը և մտածում էր, թէ ինչ ունի անելու այդ օրը և ինչ է եղել երէկ։

Յիշելով երէկուայ երեկոն, որ նա անցրել էր Կօրչազինների մօտ, որոնք հարուստ ու նշանաւոր մարդիկ էին և որոնց աղջկան, ինչպէս ենթադրում էին բոլորը, նա պէտք է առնէր, նա հոգոց քաշեց և, ծխած պապիրոսի քնթուկը դէն քցելով, ուղում էր մի հատ էլ հանել արծաթէ թութունամանից, բայց միաքը փոխեց և, վայր թողնելով կոկիկ ու սպիտակ ոտները մանճակալից, գտաւ նրանցով հողաթափները, քցեց դէր ուսերին մետաքսէ խալաթը և, արագ ու ծանր քայլերով, գնաց ննջարանի կողքին գտնուող զուգասարանը, որ ամբողջապէս տողորուած էր էլէքսիրների, օղբօղճների, ֆիքսատուարների և անուշարոյր հեղուկների արհեստական հոտով։ Այնտեղ նա առանձին փոշիով մաքրեց ու անուշահոտ հեղուկով սղոգեց շատ տեղերում լցրած առամները ու յետոյ սկսեց չորս կողմից լուացուել ու սրբուել զանազան երեսարբիչներով։ Ձեռները լուաց հոտաւէտ սապրնով, մեծ խնամքով իստակեց խողանակով երկար եղունգները, երեսն ու հաստ վիզը լուաց մեծ մարմարէ լուացարանում և գնաց ննջարանի մօտ գտնուող երրորդ սենեակը, ուր ցնցուղ (գուշ) էր պատրաստուած։ Այնտեղ էլ սառը ջրով լուաց մկանստ ու ճարպոտ սպիտակ մարմինը, սրբուեց փրշոտ ցամբոցով, հագաւ մաքուր արգուկած փոխնորդն ու հայելու պէս իստակած կիսակօշիկներն և, նստելով հայելու առաջ, սկսեց երկու խողանակով սղալել փոքրիկ ու սև խուճուճ միրուքը և գլխի առաջակողմում նօսրացած զանգուր մազերը։

Նրա գործ անած բոլոր իրեղէնները— փոխնորդը, հագուստը, ոտնամանները, փողպատները, քորոցները, օսլայած շապիկ կոճակները— ամենաառաջին, ամենաթանգ տեսակի էին, աննկատելի, պարզ, դիմացկուն ու մեծագին։

Տասնեակ փողպատներից ու քորոցներից վերցնելով առա-

ջին պատահածները,—մի ժամանակ այդ նորութիւն էր ու հաճոյք էր պատճառում, իսկ այժմ միևնոյնն էր,—Նեխիլեզօյ հագաւ իստակած ու աթոռի վրայ պատրաստ դրած շորերը էթէն ոչ բոլորովին թարմացած, բայց մաքուր ու անուշաբոյր գնաց երկարուկ սեղանատունը, որի նորատախտակ յատակը երէ մօմել էին երեք գիւղացիներ և որի մէջ դրուած էին մի ահագին կաղնի սեղանասարքի պահարանն ու նոյնպիսի մեծ բացուով սեղան: Այդ սեղանի վրայ, որ ինչ որ հանդիսաւոր բան ունէր ի առիւծի թաթերի նման լայն չափով քանդակակերտ ոտներում որ ծածկուած էր մեծ-մեծ փակագիր սկզբնատառեր կրող բարակ ու օսլայած սիւղոցով, դրուած էին՝ արծաթէ սրճամահ հոտաւատ սուրճով, նոյնպիսի շաքարաման, սերաման եփ տուած սերով և մի դամբիւղ խմորեղէնով ու թարմ հացով: Այդ սարք մօտ դրած էին նոր ստացուած նամակներ, լրագիրներ և Revu des deux Mondes-ի վերջին գրքովը՝ Նեխիլեզօյը՝ այն է ուղում էր զբաղուել նամակներով, երբ միջանցքը տանող դռնի շորորալով ներս մտաւ մի հասակաւոր սգազգեստ կին ժանեակէ գլխաշորով, որ ծածկում էր նրա մազերի բախտի լայնացած ակօսը: Դա Նեխիլեզօյի հէնց այդ բնակարանում մնած մօր աղախինն էր, Ագրաֆենա Պետրօշեան, որ այժմ մնացել էր հանգուցեալի որդու մօտ իբր անտեսուհի:

Ագրաֆենա Պետրօշեան զանազան ժամանակներ մօտ տասն տարի անց էր կացրել արտասահմանում Նեխիլեզօյի մօր հետ և աղջիկ-պարոնի տեսք ու ձևեր ունէր: Նա մանկութիւնից ի վեր ապրում էր Նեխիլեզօյների տանը և Դմիտրիյ Իվանօվիչին ճանաչում էր դեռ այն ժամանակ, երբ նա Միտենկա էր: —Բարի առաւօտ, Դմիտրիյ Իվանօվիչ:

—Բարեւ, Ագրաֆենա Պետրօշեան ի՞նչ նոր բան կայ,—հարցրեց Նեխիլեզօյը կատակով:

—Ահա նամակ կայ ձեզ. իշխանի կնոջից է թէ աղջկանից, չը գիտեմ: Վաղուց է բերել աղախինը և սպասում է իմ անհետեւում,—ասաց Ագրաֆենա Պետրօշեան, տալով նամակը և իմաստալից կերպով ժպտալով:

—Լաւ, այս բոլորիս,—ասաց Նեխիլեզօյը, առնելով նամակը, և խոփոռուեց, նկատելով Ագրաֆենա Պետրօշեայի ժպիտը:

Ագրաֆենա Պետրօշեայի ժպիտը նշանակում էր, թէ նամակը իշխանուհի Կօրչագինայիցն է, որի հետ, Ագրաֆենա Պետրօշեայի կարծիքով, Նեխիլեզօյը ամուսնանալու էր: Իսկ այդ կնիթագրութիւնը, որ արտայայտուեց Ագրաֆենա Պետրօշեայի ժպիտով, անախորժ էր Նեխիլեզօյի համար:

—Ուրեմն ասեմ սպասի,—և Ագրաֆենա Պետրօշեան,

վերցնելով ու ուրիշ տեղ դնելով սեղանը սրբելու խողանակը, որ իր տեղումը չէր, շորորուն քայլերով դուրս եկաւ սեղանաւանդից:

Նեխլիւզովը բաց արեց ու սկսեց կարդալ Ագրաֆենա Պետրովնայի տուած անուշաբոյր նամակը.

«Կատարելով ստանձնած պարտականութիւնս, այն է՝ լինել ձեր յիշողութիւնը,—գրուած էր անհաւասար կղբաւոր հաստ ու մոխրագոյն թղթի թերթի վրայ սուր-սուր, բայց լայն ձեռագրով,—յիշեցնում եմ ձեզ, որ դուք այսօր, ապրիլի 28-ին, պէտք է լինէք դատարանում իբր երգուեալ դատաւոր, ուստի և ոչ մի կերպ չէք կաբող գնալ մեր ու Կօլօսովնեի հետ տեսնելու պատկերները, ինչպէս դուք, ձեզ յատուկ թեթեամբութեամբ, խոստացաք երէկ. à moins que vous ne soyez disposé à payer à la cour d'assises les 300 roubles d'amende que vous vous refusez pour votre cheval *) ժամանակին ներկայ չը լինելու համար: Ես այդ յիշեցի երէկ, ձեր գնալուց անմիջապէս յետոյ: Չը մոռանաք ուրեմն:

Իշխ. Մ. Կօրչագինա»:

Միւս երեսում աւելացրած էր.

«Maman vous fait dire que votre couvert vous attendra jusqu'à la nuit. Venez absolument à quelle heure que cela soit**):»

Մ. Կ.

Նեխլիւզովը նօթերը կիտեց: Այդ տոմսակը շարունակութիւն էր այն ճարպիկ աշխատանքի, որ արդէն երկու ամսից ի վեր գործ էր դրւում նրա վրայ իշխանունի Կօրչագինայի կողմից և կայանում էր նրանում, որ աննկատելի թելերով հետըդհեռէ աւելի ու աւելի էր կապում նրան իշխանունու հետ: Մինչ որակայն, բացի այն սովորական անվճռականութիւնից, որ ոչ շատ ջանքէլ և ոչ թունդ սիրահարուած մարդիկ զգում են առհասարակ ամուսնութեան վերաբերմամբ, մի ուրիշ լուրջ պատճառ էլ կար, որի շնորհիւ Նեխլիւզովը, եթէ նոյն իսկ վճռէր էլ, չէր կարող իսկոյն առաջարկութիւն անել: Այդ պատճառը կայանում էր ոչ այն բանում, որ նա 10 տարի առաջ խաբել էր ու յետոյ թողել Կատիւչային,—այդ նա բոլորովին մոռացել էր և խօչընդոտ չէր համարում իր ամուսնութեան համար,—այլ նրանում, որ նա այդ ժամանակ մի մարդատէր կնոջ հետ սի-

*) Եթէ ի հարկէ տրամադիր չէք դատարանին վճարելու 300 ռուբլի տուգանք—մի գումար, որ դուք խնայում էք գործ դնել ձեր ձիու վրայ:

**) «Մայրիկը խնդրեց զրել ձեզ, որ ձեր ամանը սեղանի վրայ կը սպասի ձեզ մինչև գիշեր: Անպատճառ եկէք, որ ժամին էլ լինի»:

բային կապ ունէր, որ, թէև այժմ խզուած էր իր կողմից, բայց դեռ խզուած չէր համարուած կնոջ կողմից:

Նեխիլուդօյլը շատ վախկոտ էր կանանց վերաբերմամբ, բայց հէնց նրա այդ վախկոտութիւնն էր, որ այդ մարդատէր կնոջ մէջ ցանկութիւն զարթեցրեց նուաճել նրան: Այդ կինը այն դաւառի աղնուականների պարագլխի կինն էր, որի ընտրութիւններին մասնակցուած էր Նեխիլուդօյլը: Եւ այդ կինը, գլխահան անելով նրան, սկսեց նրա հետ սիրային կապ, որ Նեխիլուդօյլի համար օրէցօր աւելի ու աւելի գրաւիչ էր դառնում և մի և նոյն համար օրէցօր աւելի ու աւելի զգուհիւ: Սկզբում Նեխիլուդօյլը չբժամանակ աւելի ու աւելի զգուհիւ: Սկզբում Նեխիլուդօյլը չբկարողացաւ դիմանալ հրապոյրին, իսկ յետոյ, մեղաւոր զգալով իրան նրա առաջ, չէր կարողանում խզել այդ կապը առանց նրա համաձայնութեան: Այդ էր ահա պատճառը, որ Նեխիլուդօյլը կարծում էր, թէ ինքը իրաւունք չունի առաջարկութիւն անել Կօրչագինային, եթէ նոյն իսկ ցանկանար այդ բանը:

Սեղանի վրայի նամակների մէջ կար մէկը հէնց այդ կնոջ մարդուց: Նրա գիրն ու կնիքը տեսնելով, Նեխիլուդօյլը կարմրեց և իսկոյն զգաց իր մէջ եռանդի այն սաստկացումը, որ նա միշտ զգում էր վտանգը մօտենալիս: Բայց նրա յուզումը իրութիւն էր, այդ պարոնը, որ այն դաւառի աղնուականութեան պարագլուխն էր, որտեղ գտնուում էին Նեխիլուդօյլի գլխաւոր կալուածները յայտնում էր Նեխիլուդօյլին, թէ մայիսի վերջերին գաւառական զեմստօյլի արտակարգ ժողով էր նշանակուած և խնդրում էր նրան անպատճառ դալ ժողովին և donner un coup d'épaule (օգնել) դպրոցներին ու հաղորդակցութեան ճանապարհներին վերաբերեալ կարևոր հարցերում, որոնց լուծման ժամանակ զօրեղ դիմադրութիւն էր սպասուում յետադիմական կուսակցութեան կողմից:

Աղնուականութեան պարագլուխը ազատամիտ մարդ էր ու մի քանի համախոհների հետ կուում էր սկսուած յետադիմական շարժման դէմ և ամբողջովին անձնատուր էր եղել այդ կուումն ու ոչինչ չէր իմանում իր անբախտ ընտանեկան կեանքի մասին:

Նեխիլուդօյլը յիշեց այն բոլոր բոպէները, երբ ինքը սատիկ տանջուել էր այդ մարդու պատճառով,— յիշեց, թէ ինչպէ՞ մի անգամ ինքը կարծում էր, թէ նա իմացել է ամեն բան, ու պատրաստուում էր մենամարտել նրա հետ, մտադիր լինելով օգնել մէջ դատարկել ուշիւղիւքը, յիշեց և այն սարսափելի անախորժութիւնը, երբ այդ մարդու կինը յուսահատ դուրս պրծաւ պարտէզը, լճակում խեղդուելու դիտաւորութեամբ, և երբ ինք վազվզում էր պարտէզում, վնասուելով նրան: «Զեմ կարող այժմ գնալ և չեմ կարող ոչինչ ձեռնարկել, մինչև որ այդ կինը

չը պատասխանի ինձ», մտածեց Նեխիլեզօյլը։ Մի շարաթ առաջ ինքը նրան վճռական նամակ էր գրել, որի մէջ մեղաւոր էր ճանաչում իրան, պատրաստականութիւն էր յայտնում ամեն կերպ քաւել իր մեղքը, բայց, այնուամենայնիւ, պնդում էր, որ, հէնց նրա օգտի տեսակէտից, իրանց յարաբերութիւնները պէտք է ընդ միշտ վերջացած համարել։ Ահա այդ նամակի պատասխանն էր, որ նա սպասում էր, բայց չէր ստանում։ Այն հանգամանքը, որ պատասխան չը կար, մասամբ լաւ նշան էր։ Եթէ նա համաձայն չը լինէր յարաբերութիւնները խզելուն, վաղուց գրած կը լինէր կամ նոյն իսկ ինքը եկած, ինչպէս անում էր առաջ։ Նեխիլեզօյլը լսել էր, որ այնտեղ այժմ մի ինչ որ օֆիցէր կայ, որ սիրաշահում է նրան, և այդ բանը տանջում էր նրա սիրտը խանդոտութեամբ ու մի և նոյն ժամանակ ուրախացնում էր նրան, յոյս ներշնչելով, որ կարող է ազատուել իրան տոչորող կեղծութիւնից։

Միւս նամակը նրա կայուն ծների գլխաւոր կառավարչից էր։ Կառավարիչը գրում էր, թէ անհրաժեշտ է, որ ինքը Նեխիլեզօյլը գնայ այնտեղ ժառանգութեան իրաւունքների մէջ հաստատուելու համար և, բացի այդ, վճռելու համար այն հարցը, թէ ինչպէս պէտք է շարունակել տնտեսութիւնը, այնպէս, ինչպէս մօր ժամանակն էր, թէ՞ ինչպէս ինքը առաջարկում էր հանգուցեալ իշխանուհուն և այժմ էլ առաջարկում է իշխանին, — աւելցնել գիւղատնտեսական գործիքների թիւը և սեփական միջոցներով մշակել այն բոլոր հողը, որ վարձով է տրւում գիւղացիներին։ Կառավարիչը գրում էր, թէ այդ տեսակ շահագործումը շատ աւելի ձեռնտու կը լինի։ Միաժամանակ կառավարիչը ներողութիւն էր խնդրում, որ մի քիչ ուշացնում է հաշուով առ 1-ն ամսի ստանալիք 3,000 ուռլլին, որ կ'ուղարկի հետեւեալ պօստով։ Ուշացնելու պատճառն էլ այն էր, որ ոչ մի կերպ չէր կարողացել հաւաքել այդ փողը գիւղացիներից, որոնք այնտեղ են հասցրել իրանց անբարեխղճութիւնը, որ նրանց վճարել տալու համար անհրաժեշտ էր գիմել իշխանութեան օգնութեան։ Այդ նամակը և ակոորթելի էր Նեխիլեզօյլի համար, և անախորժ։ Ախորթելի էր զգալ իր իշխանութիւնը մեծ սեփականութեան վրայ, իսկ անախորժ էր այն, որ նամակը յիշեցնում էր նրան, թէ ինքը վաղուց ի վեր ապօրինի է ճանաչել այն բանը, որ ինքը հողի տէր է, և թէ ինքը ջանելութեան առաջին տարիներում Հէրբէրտ Սպենսերի յափշտակուած հետեւողներից էր և մասնաւանդ, լինելով խոշոր հողատէր, սաստիկ ազդուել էր նրա Social statics-ի այն ստորասութիւնից (թեզիս), թէ արդարութիւնը թոյլ չէ տա-

լիս մասնաւոր հողային սեփականութիւն ունենալ: Երիտաւարդութեանը յատուկ շիտակութեամբ ու վճատականութեամբ նա ոչ միայն ասում էր այն ժամանակ, թէ հողը չէ կարող մասնաւոր սեփականութեան առարկայ լինել, և ոչ միայն համալսարանում շարադրութիւն էր գրում դրա մասին, այլ և իրօք տուեց այն ժամանակ մի փոքր հողաբաժին (որ մօրը չէր պատկանում, այլ անձամբ իրան, իբր ժառանգութիւն հօրից) գիւղացիներին, չը ցանկանալով, իր համոզմունքների հակառակ, հողի տէր լինել: Այժմ, ժառանգաբար մեծ հողատէր դառնալով, նա պէտք է երկուսից մէկը անէր,—կամ հրաժարուէր իր սեփականութիւնից, ինչպէս արել էր տաս տարի առաջ հօրական ֆնացած 200 օրավարի վերաբերմամբ, կամ թէ լուեկայն համաձայնութեամբ սուտ ու սխալ ճանաչէր իր առաջուան բոլոր գաղափարները:

Առաջինը նա չէր կարող անել, որովհետեւ բացի հողից ապրուստի ուրիշ ոչ մի միջոց չունէր: Պետական ծառայութիւն մտնել նա չէր կամենում, մինչդեռ, միւս կողմից, նա արդէն իւրացրել էր կենցաղավարութեան շոյալ սովորոյթներ, որոնցից անհնար էր համարում ձեռք քաշել: Ասենք՝ այդ անհրաժեշտ էլ չէր, որովհետեւ չը կային այլեւ ոչ այն համոզմունքի ոյժը, ոչ այն վճռականութիւնը, ոչ էլ այն անախառնութիւնն ու զարմացնիլու ցանկութիւնը, որ նա ունէր երիտասարդ ժամանակ: Գալով երկրորդին,—այն է՝ հրաժարուել հողատիրութեան ապօրինութիւնը ապացուցանող այն պարզ ու անհերքելի հիմքերից, որ նա այն ժամանակ քաղել էր Սպէնսերի Social statics-ից և որոնց փայլուն հաստատութիւնը նա յետոյ, շատ անցած, գտել էր Հէնրի Զօրջի գրուածքներում,—այդ էլ նա ոչ մի կերպ չէր կարող անել:

Եւ այդ պատճառով կառավարչի նամակը անախորժ էր նրա համար:

IV

Սուրճը խմելուց յետոյ Նիկիլիզօյլը գնաց առանձնասենեակը՝ նայելու ծանուցադրին, թէ ժամի քանիսին պէտք է լինէր դատարանում, և պատասխան գրելու իշխանուհուն: Առանձնասենեակը գնալու համար պէտք էր անցնել արհեստանոցով: Արհեստանոցում կախուած էին զանազան էտրուդներ և կար մի նկարակալ՝ սկսուած ու չուր տուած նկարով, որի վրայ Նիկիլիզօյլը չարձարուել էր երկու տարի: Այդ նկարի ու էտրուդների և առհասարակ ամբողջ արհեստանոցի տեսքը յիշեցրեց նրան

նկարչութեան մէջ այլևս առաջ գնալու անկարողութեան զգացմունքը, որ առանձնապէս սաստկացել էր վերջին ժամանակները: Նա բացատրում էր այդ զգացմունքը զեղեցկագիտական ճաշակի չարազանք նուրբ զարգացմամբ, բայց և այնպէս այդ գիտակցութիւնը շատ անախորժ էր նրա համար:

Եօթը տարի առաջ նա թողել էր պետական ծառայութիւնը, վճռելով, որ ինքը կոչումն ունի նկարիչ լինելու, և գեղարուեստական գործունէութեան բարձրութիւնից փոքր ինչ արհամարհաբար էր նայում միւս բոլոր գործունէութիւնների վրայ: Այժմ դուրս էր գալիս, որ նա իրաւունք չունէր այդպէս վերաբերուելու, ուստի և ամեն մի յիշողութիւն այդ բանի մասին անախորժ էր նրա համար: Ծանր զգացմունքով նայեց նա արհեստանոցի բոլոր այդ ճոխ պարագաներին և տխուր տրամադրութեամբ մտաւ առանձնասենեակը: Առանձնասենեակը մի բարձր ու շատ մեծ սենեակ էր ամեն տեսակ զարդերով, պարագաներով ու յարմարութիւններով:

Անագին սեղանի աջքում, պայմանաժամաւոր թղթերի բաժանմունքում, Նեկիլիզօվը իսկոյն գտաւ ծանուցագիրը, որի մէջ գրուած էր, թէ դատարանում պէտք է լինել ժամի տասնութէկին, և նստեց մի տոմսակ գրելու իշխանուհուն, թէ չնորհակալ է հրաւերի համար և թէ կ'աշխատի համեմել ճաշին: Բայց առաջին գրած տոմսակը ճղեց—շատ էր մտերմական, երկրորդը գրեց,—ասուն էր, գրեթէ վիրաւորական: Այդ էլ ճղեց և հուպ տուեց էլէքտրական զանգի կոճակը: Դռնովը ներս մտաւ մի հասակաւոր և մռայլ տեսքով լաքէյ, երեսը ածիլած, ծնօտամիրքներ թողած ու մոխրագոյն բամբակակտաւէ գոգնոցը հագին:

—Խնդրեմ ուղարկէք կառքի:

—Լսում եմ:

—Եւ ասացէք,—այնտեղ սպասում է Կօրչագիւնների աղախինը,—որ չնորհակալ եմ, կ'աշխատեմ գալ:

—Լսում եմ:

«Այդ անքաղաքաւարութիւն է, բայց չեմ կարող գրել: Միևնոյնն է, այսօր կը տեսնուեմ հետը»,—մտածեց Նեկիլիզօվը և գնաց հագնուելու:

Երբ նա հագնուած դուրս եկաւ պատշգամբը, ծանօթ կառապանի ռէզինէ գօղաւոր կառքը արդէն սպասում էր նրան:

—Երէկ դուք նոր էիք դուրս եկել Կօրչագիւնների մօտից, —ասաց կառապանը, կիսով չափ շուռ տալով շապկի սպիտակ օձիքի մէջ հուժկու, արեւոտ վիզը,—որ ես եկայ այնտեղ. դու նապանն ասաց՝ «նոր դուրս եկան»:

«Կառապաններին էլ յայտնի են իմ յարաբերութիւնները Կօր-

չազինների հետ», մտածեց Նեխիլեզովը, և այն չը վճռած հարցը, որ վերջերքը շարունակ զբաղեցնում էր նրան,—պէտք է ամուսնանալ թէ ոչ Կօրչազինայի հետ,—նորից կանգնեց նրա առաջ, և նա, ինչպէս այդ ժամանակ իր վճռին ենթակայ հարցերի մեծ մասի վերաբերմամբ, ոչ մի կերպ չէր կարողանում վճռել ոչ դէսը, ոչ դէնը:

Ի նպաստ ընդհանրապէս ամուսնանալուն այն կար նախ և առաջ, որ ամուսնութիւնը, վերացնելով սեռական կեանքի անկանոնութիւնը, բացի ընտանեկան օջաղի հաճութենքից՝ տալիս էր նոյնպէս և հնարաւորութիւն բարոյական կեանք վարելու, ինչպէս նա անուանում էր այդպիսի ընտանեկան կեանքը. երկրորդը և գլխաւորապէս այն, որ Նեխիլեզովը յոյս ունէր, թէ ընտանիքը, երեխաները իմաստ կը տան նրա այժմեան անբովանդակ կեանքին: Այդ ի նպաստ ամուսնութեան էր ընդհանուր առմամբ իսկ ամուսնութեան դէմ էր, առաջինը, բոլոր ոչ ջանէլ ամուրիներին յատուկ ահը իրանց ազատութիւնը կորցնելու և, երկրորդը, մի անգիտակցական երկիւղ կնոջ գաղտնախորհուրդ էութիւնից:

Իսկ մասնաւորապէս ի նպաստ ամուսնութեան Միսսիի հետ (Կօրչազինայի տնունը Մարիա էր, բայց յայտնի չըջանի բուր ընտանիքներում ընդունուած սովորութեան համեմատ նրան մականունն էին տուել) կար առաջինը այն, որ նա տոհմիկ էր և ամեն բանում, հագուստից սկսած մինչև խօսելու, ման գալու, ծիծաղելու ձևը ջոկուում էր հասարակ մարդկանցից, ջոկուում էր ոչ թէ մի բացառիկ բանով, այլ «օրինաւորութեամբ»,—Նեխիլեզովը ոչ մի ուրիշ բառով չէր կարողանում արտայայտել այդ յատկութիւնը, որ շատ բարձր էր գնահատում. երկրորդը, կար և այն, որ Միսսին իրան, Նեխիլեզովին, բոլոր միւս մարդկանցից բարձր էր գնահատում, և ուրեմն, նրա կարծիքով, հասկանում էր նրան: Եւ այդ հանգամանքը, որ Միսսին հասկանում էր նրան, այսինքն ընդունում էր նրա բարձր արժանաւորութիւնները, ապացոյց էր, Նեխիլեզովի աչքում, Միսսիի խելօքութեան և ճիշտ գատելու ընդունակութեան: Իսկ մասնաւորապէս Միսսիի հետ ամուսնանալու դէմ կար, առաջինը, այն, որ շատ հաւանականօրէն կարելի կը լինէր գտնել Միսսիից էլ շատ աւելի արժանաւորութիւններ ունեցող և ուրեմն Նեխիլեզովին աւելի ևս արժանի հարմնացու օրիորդ և, երկրորդ, այն, որ Միսսին 27 տարեկան էր և ուրեմն Նեխիլեզովից առաջ անշուշտ զբաղուած կը լինէր ուրիշներով,—և այդ միտքը տանջում էր Նեխիլեզովին: Նրա հպարտութիւնը չէր հաշտուում այն բանի հետ, որ Միսսին նոյն իսկ անցեալում կարող էր սիրել ոչ նրան, այլ մի

ուրիշին: Ի հարկէ, Միսսին չէր կարող իմանալ, թէ կարող է պատահել Նեխլիւզովին, բայց հէնց այն միտքը միայն, թէ Միսսին կարող էր առաջ սիրած լինել ուրիշին, վերաւորում էր նրան:

Այնպէս որ նոյնքան հիմք կար ի նպաստ ամուսնութեան, որքան և ամուսնութեան դէմ. գոնէ իրանց ոյժով այդ հիմքերը հաւասար էին միմեանց, և Նեխլիւզովը, ինքն իր վրայ ծիծաղելով, անուանում էր իրան Բուրիդանի էշ^{*)}: Եւ այնուամենայնիւ մնում էր այդ էշի դրութեան մէջ, չիմանալով որն ընտրել երկու խուրձերից:

«Ասենք, ազնուականների պարագլխի կնոջից, Մարիա Վասիլիւշնայից, նամակ չը ստացած ու այդ հարցը բոլորովին չը վերջացրած, միևնոյնն է, ես չեմ էլ կարող ոչինչ անել», ասաց նա ինքն իրան:

Եւ այդ գիտակցութիւնը, թէ նա կարող է և պարտական է յետաձգել վճիռը, ախորժելի էր նրա համար:

«Սակայն, այդ բոլորը յետոյ կը մտածեմ կը տեսնեմ», ասաց նա ինքն իրան, երբ նրա կողքը արդէն բոլորովին անձայն մօտեցաւ դատարանի մուտքին, կանգ առնելով նրա առաջի ասֆալտի վրայ:

«Այժմ պէտք է բարեխղճօրէն կատարել իմ հասարակական սքարտականութիւնը, ինչպէս միշտ անում եմ և պարտադիր եմ համարում անել: Բացի դրանից, յաճախ հետաքրքիր էլ է լինում այդ», ասաց նա ինքն իրան և դոնապանի մօտով մտաւ դատարանի սրահը:

Կ

Դատարանի միջանցքներում սաստիկ շարժում էր տիրում արդէն, երբ Նեխլիւզովը մտաւ այնտեղ:

Սպասաւորները զանազան թղթերով ու յանձնարարութիւններով արագ-արագ գնում գալիս էին, կամ սրընթաց յետ ու առաջ վազվզում, հեալով ու ոտները քստացնելով, առանց դիմելիցը կտրելու: Պրիստաւիները, փաստաբանները ու դատա-

*) XIV դարի սխօլաստիկ փիլիսոփայ Բուրիդանին եւ վերագրում հետեւեալ օրինակը, որ մի ժամանակ յաճախ բերում էր կամքի աղատութեան գաղափարը պաշտպանողների դէմ. երթադրելով, թէ մի սոված կամ ծարաւ էշ գտնուում է երկու համանման խուրձերի կամ ջրով լի ամանների արանքում, հաւասար հեռավորութեամբ երկուսից էլ, պնդում էին, թէ այդ էշը կը ստակէր քաղցից կամ ծարաւից, եթէ նրա կամքը անպայման աղառ լինէր ընտրութեան մէջ, որովհետեւ ոչ մի հիմք չունէր նա ընտրելու այդ երկու համանման բաներից մէկը կամ միւրը: Ե. Թ.

ւորները դէս ու դէն էին գնում, իսկ խնդրաւորները և ձերբակալութեան շնթարկուած մեղադրեալները տխուր-տխուր ման էին գալիս պատերի մօտ կամ նստած սպասում էին:

—Ո՞րտեղ է նախնգական դատարանը,—հարցրեց Նեխիլեզօյը սպասաւորներից մէկից:

—Ո՞ր մէկը: Քաղաքացիական բաժանմունք կայ, դատաստանական պալատ կայ:

—Երգուեալ դատաւոր եմ ես:

—Ուրեմն քրէական բաժանմունքն է ձեզ պէտք: Այդպէս էլ կ'ասէիք: Այսպէս կը գնաք դէպի աջ, յետոյ դէպի ձախ, և երկրորդ դուռը կը լինի:

Նեխիլեզօյը գնաց նրա ցոյց տուած կողմը:

Սպասաւորի ասած դռան մօտ երկու հոգի կանգնած սպասում էին. մէկը մի բարձրահասակ, հաստ վաճառական էր,—մի բարեհոգի մարդ, որ անշուշտ լաւ նախաճաշել ու խմել էր և ամենաուրախ տրամադրութեան մէջ էր,—միւսը մի գործակատար էր՝ հրէայ ծագումով: Նրանք բոլորի գնի մասին էին խօսում, երբ Նեխիլեզօյը մօտեցաւ նրանց ու հարցրեց, թէ այնտեղ է արդեօք երգուեալների սենեակը:

—Այստեղ է, պարոն, այստեղ: Դուք էլ մեզնից էք, երգուեալ էք,—հարցրեց բարեհոգի վաճառականը, ուրախ-ուրախ նշան անելով աչքով:

—Ուրեմն միասին կ'աշխատենք,—չարուեակեց նա Նեխիլեզօյի դրական պատասխանից յետոյ.—2-րդ գիլդիայի վաճառական Բակլաջօվ,—ասաց նա, մեկնելով փափուկ, լայն ու չը ծալուող ձեռքը.—այո, պէտք է աշխատել: Ո՞ւմ հետ պատիւ ունիմ: Նեխիլեզօյն ասաց իր աղգանունը և մտաւ երգուեալ դատաւորների սենեակը:

Երգուեալների փոքրիկ սենեակում մօտ տասը հոգի տեսակ-տեսակ մարդիկ կային: Բոլորն էլ նոր էին եկել և ումանք նստած էին, ումանք էլ ման էին գալիս, զննելով միմեանց ու ծանօթանալով իրար հետ: Մի պաշտօնաթող ծառայող կար նրանազգեստով, միւսները սիրտուկով էին կամ պիջակով, բացի մէկից, որ գիւղացու հագուստով էր:

Ձը նայելով, որ դրանցից չատերը բանից յետ էին ընկել և ասում էին, թէ իրանց համար ծանրութիւն է այդ, այնուամենայնիւ բոլորի երեսների վրայ էլ արտափայլում էր մի թեթեւ հաճոյք, առաջ եկած կարեւոր հասարակական գործ կատարելու գիտակցութիւնից:

Երգուեալները, որը ծանօթացած իրար հետ, որն էլ հէնց այնպէս, միայն գուշակելով, թէ ով ով պէտք է լինի, խօսում էին:

իրար մէջ եղանակի մասին, վաղահաս գարնան մասին, առաջիկայ գործերի մասին: Նեխլիւզովի հետ ծանօթ չեղողները շտապեցին ծանօթանալ, ակներևաբար՝ առանձին պատիւ համարելով այդ իրանց համար: Եւ Նեխլիւզովը, ինչպէս առհասարակ անծանօթ մարդկանց մէջ եղած ժամանակ, ընդունում էր այդ իբր մի բան, որ այդպէս էլ պէտք է լինի: Եթէ մէկը նրան հարցնէր, թէ ինչու է նա իրան մարդկանց մեծ մասից բարձր համարում, նա չէր կարող պատասխան տալ, որովհետեւ նրա ամբողջ կեանքը ոչ մի առանձին արժանաւորութիւն չէր ներկայացնում: Իսկ այն բանը, որ նա լաւ անգլիկերէն, ֆրանսերէն ու գերմաներէն արտասանութիւն ունէր, կամ որ նրա սպիտակեղէնը, հագուստը, փողպատն ու շապկակոճակները այդ ապրանքների ամենաառաջին հայթայթողներից էին առնուած, ոչ մի կերպ չէր կարող,— ինքն էլ այդ հասկանում էր,— հիմք ծառայել նրան գերազանց մարդ համարելու: Եւ սակայն նա անկասկած իրան գերազանց մարդ էր համարում ու իր վերաբերմամբ ցոյց տրուող յարգանքի նշանները ընդունում էր իբր պարտուպատշաճ մի բան, և վերաւորում էր, երբ այդ չէր լինում: Երդուեալների սենեակում հէնց այդ անսխորժ զգացմունքը ունեցաւ նա չնորհիւ մէկի անյարգանք վերաբերմունքին դէպի ինքը: Երդուեալների թւում մէկը ծանօթ դուրս եկաւ Նեխլիւզովին: Պետր Գերասիմովիչն էր այդ (Նեխլիւզովը ոչ մի ժամանակ չէր իմացել նրա ազգանունը և նոյն իսկ մի քիչ պարծենում էր այն բանով, որ չը գիտէ նրա ազգանունը), նրա քրոջ երեխաների նախկին ուսուցիչը: Այդ Պետր Գերասիմովիչը այժմ գիմնազիայի ուսուցիչ էր: Նա միշտ անտանելի էր թուում Նեխլիւզովին իր անհիմն մտերմական վերաբերմունքով, իր ինքնագոհ քրքիջով և առհասարակ, ինչպէս ասում էր Նեխլիւզովի քոյրը, իր «կոմմունականութեամբ»:

— Հը՛ր, դուք էլ թոռն ընկաք,— բարձր քրքիջով հանդիպեց Նեխլիւզովին Պետր Գերասիմովիչը:— Զը կարողացա՞ք դուրս պըճնել, օձիքներդ ազատել:

— Ես ամենին միտք էլ չեմ ունեցել օձիքս ազատելու,— խիստ ու տխուր ձայնով ասաց Նեխլիւզովը:

— Օ՛, մեծ քաղաքացիական առաքելութիւն է այդ: Բայց կացէք, երբ որ կը քաղցէք ու քնից կը զրկուէք, կը տեսնենք, թէ ինչ կ'ասէք այն ժամանակ,— աւելի ևս բարձրաձայն քրքջալով ասաց Պետր Գերասիմովիչը:

«Այս տէրտէքի տղան իսկոյն կը սկսի «դու»-ով խօսել ինձ հետ», մտածեց Նեխլիւզովը և, այնպիսի արտաբերութիւն արտայայտելով երեսին, որ բնական կը լինէր միայն այն դէպքում,

Եթէ նրան այդ բոլորին հաղորդած լինէին իր բոլոր հարազատ-
ների մահը, հեռացաւ նրանից ու մօտեցաւ մի խմբի, որ կադ-
մուել էր ինչ որ մի բան տաք-տաք պատմող մի ամիլում,
բարձրահասակ ու տեղով պարոնի շուրջը: Այդ պարոնը խօսում
էր քաղաքացիական բաժնում այդ ժամանակ քննուող մի դատի
մասին, իբրև իրան շատ լաւ ծանօթ գործի մասին, տալով դա-
տաւորների ու հռչակաւոր փաստաբանների անուններն ու հայր-
անունները: Նա պատմում էր, թէ ինչ զարմանալի դարձուածք
էր կարողացել տալ գործին հռչակաւոր փաստաբաններից մէկը,
այնպէս որ միւս կողմի գործատէրը, մի պառու կին, չը նայե-
լով իր կատարեալ արդարութեանը, ստիպուած էր լինելու զուր
տեղը ահագին փող հատուցանել իր հակառակորդին:

— Հանճարեղ փաստաբան է, — ասում էր նա:

Շրջապատողները ակնածութեամբ էին լսում նրան և
ոմանք աշխատում էին իրանց նկատողութիւնները կցել նրա
խօսքերին, բայց նա բոլորի խօսքն էլ կտրում էր, կարծէք թէ
միայն ինքը կարող էր ինչպէս հարկն է իմանալ ամեն բան:

Չը նայելով, որ Նեխիլիզօւլը ուշ էր եկել, էլի պէտք եղաւ
երկար սպասել. պատճառը դատարանի անդամներից մէկն էր,
որ դեռ չէր եկել տնից:

VI

Նախագահողը շուտ էր եկել դատարան: Նախագահողը գէր
ու բարձրահասակ մի մարդ էր, մեծ-մեծ ու սպիտակող ծնօտա-
միրուքներով: Նա ամուսնացած էր, բայց շատ անառակ կեանք
էր վարում, ինչպէս եւ իր կինը: Նրանք չէին խանգարում մի-
մեանց: Այդ առաւօտ նա տոմսակ էր ստացել ամառը իրանց
տանը ապրած և այժմ հարաւից Պետերբուրգ գնացող չվէյցա-
րուհի դատարակչուհուց, որ գրում էր, թէ ինքը ժամի երե-
քից մինչև վեցը քաղաքում կը լինի ու կը սպասի նրան «Իտա-
լիա» հիւրանոցում: Ուստի և նա ուզում էր այսօրուայ նիստը
աւելի վաղ սկսել ու աւելի վաղ վերջացնել, որպէսզի կարո-
ղանար մինչև ժամի վեցը այցելել այդ կարմրաչէկ կլարա վա-
սիլիեփլային, որի հետ անցեալ ամառ սիրային յարաբերութիւն-
ներ էր սկսել ամառանոցում:

Առանձնասենեակը մտնելով, նա կողպեց դուռը, թղթերի
սղահարանի ներքեի դարակից հանեց երկու հատ մարմնամարդա-
կան ծանրոցներ և 20 շարժում արեց դէպի վեր, դէպի առաջ,
դէպի աջ ու ձախ և դէպի ներքեւ, և յետոյ երեք անգամ թեթեւ
պզգեց ծանրոցները գլխավերեւին բռնած:

«Ոչ մի բան այնպէս չէ կազդուրում, ինչպէս սառը ջրով ցրցնքուելը և մարմնամարդութիւնը», մտածեց նա, մասնեմատին ոսկէ օղ անց կացրած ձախ ձեռքով շօշափելով աջ կոսն գուրս պրծած մկանը: Նրան դեռ մնում էր անել moulinet *) (նա միշտ անում էր այդ երկու շարժումը՝ ատենանում երկար նստելուց առաջ), երբ դուռը ցնցուեց: Ով որ ուզում էր բանալ դուռը՝ Նախագահը շտապով տեղը դրեց ծանրոցները և բաց արեց դուռը:

—Ներողութիւն,—ասաց նա:

Ներս մտաւ դատարանի անդամներից մէկը ոսկէօղ ակնուցով, ցածրահասակ, ուսերը վեր քաշած և դէմքը խոժոռուած:

—Է՛լի չը կայ Մատֆէյ Նիկիտիչը,—ասաց անդամը տփգոհութեամբ:

—Դեռ ոչ, պատասխանեց Նախագահը, հագնելով համադրեալը:—Միշտ ուշանում է:

—Զարմանալի է, ինչպէս չէ ամաչում,—ասաց անդամը և բարկացած նստեց, հանելով պապիրոսները:

Դատարանի այդ անդամը, որ շատ ճշտապահ մարդ էր, այդ առաւօտ անախորժ ընդհարումն էր՝ ունեցել իր կնոջ հետ այն պատճառով, որ կինը որոշած ժամանակից առաջ էր ծախսել ամբողջ ամսի համար իրան տուած փողը: Կինը խոնդրում էր, որ նա միւս ամսուայ փողից կանխիկ տայ իրան, բայց նա պատասխանեց, թէ չի շեղուիլ իր սկզբունքից: Կոուեցին: Կինն ասաց, որ, եթէ այդպէս է, ճաշ չի լինիլ այդ օրը, թող տուն չը գայ ճաշելու: Այդ խօսքի վրայ, նա թողեց հեռացաւ, վախենալով, որ կինը կը կատարի սպառնալիքը, որովհետեւ նրանից ամեն բան սպասելի էր:—«Դէ արի ու կարգին, բարոյական կեանք վարի, —մտածում էր նա, նայելով պայծառագէմ, առողջ, զուարթ ու բարեհոգի Նախագահի վրայ, որ արմուկները լայն չոած, սիրուն սպիտակ ձեռքերով սղալում էր ոսկեկար օձիքի երկու կողմը ձգուող երկար ու խիտ սպիտակող ծնօտամիրութիւնները,—դա միշտ գոհ է և ուրախ, իսկ ես տանջւում եմ ու տանջւում»:

Ներս մտաւ քարտուղարը և ինչ որ գործ բերեց:

—Շատ չնորհակալ եմ,—ասաց Նախագահը ու կայքրեց պապիրոսը:—Ո՞ր գործն ենք առաջինը քցելու

—Իմ կարծիքով, թունաւորման գործը,—իբր թէ անտարբերութեամբ ասաց քարտուղարը:

*) Մուլինէ անել, faire le moulinet, կը նշանակի արագութեամբ պտտեցնել իր շուրջը մի փայտ, մի սուր, մի ծանրոց: Ծ. Թ.

—Շատ լաւ, թող լինի թունաւորման գործը,—ասաց նա-
խադահը, ի նկատի ունենալով, որ այդ այնպիսի գործ է, որ
կարելի է մինչև ժամի 4-ը վերջացնել ու յետոյ գնալ—Իսկ
Մատֆէյ Նիկիտիչը չէ եկել:

—Դեռ չէ:

—Իսկ Բրէվէն այստեղ է:

—Այոտեղ է,—պատասխանեց քարտուղարը:

—Ուրեմն, եթէ տեսնէք, ասէք իրան, որ թունաւորումից
կը սկսենք:

Բրէվէն դատախազի այն օգնականն էր, որ մեղադրելու էր
այդ նիստում,

Միջանցքը դուրս գալով, քարտուղարը պատահեց Բրէվէնի:
Ուսերը բարձր վեր քաշած, համազգեստի կոճակները բաց և
թղթակալը կոնատակին, նա արագ քայլերով, գրեթէ վազէվազ,
անցնում էր միջանցքով, թխթխկացնելով կրունկներով և ազատ
ձեռքը այնպէս տարուբերելով, որ ձեռքի մակարդակը ուղղա-
հայեաց էր կազմում նրա քայլերի ուղղութեանը:

—Միխայիլ Պետրովիչը խնդրեց իմանամ, պատրաստ էք
արդե՞ք,—հարցրեց նրանից քարտուղարը:

—Ի հարկէ, ես միշտ պատրաստ եմ,—ասաց դատախազի
օգնականը:—Ո՞ր գործն է առաջինը:

—Թունաւորումը:

—Շատ լաւ,—ասաց դատախազի օգնականը. բայց նա
ամենեւին շատ լաւ չէր գտնում այդ,—ամբողջ զիչերը անքուն
էր անցրել նա: Նրանք ճանապարհ էին քցել իրանց ընկերովը,
շատ խմել էին ու թուղթ էին խաղացել մինչև ժամի 2-ը, իսկ
յետոյ գնացել էին այն անառակատունը, ուր դեռ վեց ամիս ա-
ռաջ գտնւում էր Մասլովան, այնպէս որ նա հէնց թունաւորման
գործը ժամանակ չէր ունեցել կարդալու եւ այժմ էր ուզում
աչքի անցնել իսկ քարտուղարը, իմանալով, որ նա չէ կարդա-
ցել թունաւորման գործը, գիտմամբ խորհուրդ տուեց նախա-
դահին առաջինը քցել այդ գործը: Քարտուղարը ազատամիտ,
մինչև անգամ արմատական հայեացքների տէր մարդ էր, իսկ
Բրէվէն պահպանողական էր և նոյն իսկ, ինչպէս Ռուսաստա-
նում ծառայող գրեթէ բոլոր գերմանացիները, նուիրուած էր
ռուսադաւանութեան. քարտուղարը չէր սիրում նրան և նա-
խանձում էր նրա պաշտօնին:

—Իսկ ներքինիացողների գործը ինչպէս է լինելու,—հար-
ցրեց քարտուղարը:

—Ասացի, որ վկաների բացակայութեան պատճառով չեմ

կարող:—ասաց դատախազի օգնականը.—այդպէս էլ կը յայտնեմ դատի ժամանակ:

—Բայց չէ որ միննոյնն է...

—Չեմ կարող,—ասաց դատախազի օգնականը և, առաջուան պէս ճօճելով ձեռքը, վազեց իր առանձնասենեակը:

Ներքինիացողների աղանդին պատկանողների գործը նա յետաձգում էր գործի տեսակէտից մի բոլորովին անկարելւոր ու անպէտք վկայի բացակայութեան պատճառով և միայն նրա համար, որ այդ գործը, ինտէլիգէնտ երդուեալ դատաւորներից կազմուած ատենուում քննուելիս, կարող էր արդարացմամբ վերջանալ: Իսկ ինչպէս առաջուց պայմանաւորուել էին նախագահի հետ, այդ գործը պէտք է քցէին դաւառական քաղաքի նստաչրջանին, ուր մեծ մասամբ գիւղացիներից էին լինելու երդուեալները և ուր այդ պատճառով աւելի յոյս կարելի էր ունենալ, որ մեղադրական կը լինի դատաւճիւրը:

Շարժումը միջանցքում հետզհետէ սաստկանում էր: Ամենից աւելի մարդ կար քաղաքացիական բաժանմունքի դահլիճի մօտ, ուր քննուում էր այն գործը, որի մասին պատմում էր երդուեալ դատաւորների սենեակում դատական գործերի սիրահար սիրունատես պարոնը: Ընդհատման միջոցին այդ դահլիճից դուրս եկաւ այն պառաւ կինը, որի կայքը հանճարեղ փաստաբանը յաջողեցրել էր խլել յօգուտ նրա ճարպիկ հակառակորդի, որ ոչ մի իրաւունք չուներ այդ կայքի վրայ,—այդ գիտէին և դատաւորները ու ևս աւելի ինքը գանգատաւորն ու իր փաստաբանը, բայց այնպիսի հնարք էին բանեցրել նրանք, որ չէր կարելի չառնել պառաւից նրա կայքը և չը տալ ճարպիկ գանգատաւորին: Պառաւը մի հաստիկ կին էր զարգարուն հագուստով և ահագին ծաղիկներով գլխարկի վրայ: Դուրս գալով դահլիճի դռնից, նա կանգ առաւ միջանցքում և, չուելով հաստիկ ու կարճիկ ձեռքերը, շարունակ կրկնում էր, դիմելով իր փաստաբանին. «Այսպէս էլ բան կը լինի: Ասացէք, խնդրեմ: Այսպէս էլ բան կը լինի»: Փաստաբանը նայում էր նրա գլխարկի ծաղիկներին ու չէր լսում նրան, ինչ որ մտածմունքով զբաղուած:

Պառաւի յետևից քաղաքացիական բաժնի դահլիճի դռնից արագ դուրս եկաւ մի պարոն, լայնաբաց ժիլէտի փայլուն լանջապանով և նոյնքան փայլուն ինքնագոհ դէմքով: Հէնց այն հռչակաւոր փաստաբանն էր այդ, որ այնպէս արեց, որ ծաղկաւոր պառաւը դատարկածեռն մնաց, իսկ իրան 10 հազար վարձատրութիւն տուող ճարպիկ գանգատաւորը 100 հազարից աւելի ստացաւ: Բոլորի աչքերը ուղղուեցին փաստաբանի կողմը,

որ զգում էր այդ ու իր ամբողջ արտաքինով կարծէք ասում էր՝ «Պէտք չեն անձնութեանն ոչինչ արտայայտութիւններ», և որ արագ անցաւ նրանց կողքով:

ԿՈՒՆԱԿԱՆ

Վերջապէս Մատթէյ Նիկիտին էլ եկաւ, և դատաստանական պրիստավը,—մի նիհար ու երկարավիզ մարդ կողքահան քայլուածքով ու կողքահան դուրս ցցուած ներքերի շրթունքով,—մտաւ երդուեալ դատաւորների սենեակը:

Այդ դատաստանական պրիստավը ազնիւ մարդ էր ու համալարանաւարտ, բայց չէր կարողանում ոչ մի տեղում երկար մնալ, որովհետեւ ժամանակ առ ժամանակ սկսում էր խմել ու այնպէս էր խմում, որ հարբելուց աչք չէր բաց անում: Երեք ամիս առաջ նրա կնոջը հովանաւորող մի կոմսուհի սարքել էր նրա համար այդ տեղը, և նա մինչև այժմ մնում էր այդ տեղում և ուրախանում դրանով:

—Հը՞, պարոններ, հաւաքուել էք բոլորդ,—ասաց նա քրթին դնելով պէնսնէն ու նայելով նրա վրայից:

—Կարծեմ, բոլորս,—ասաց ուրախ վաճառականը:

—Այ կը ստուգենք այժմ,—ասաց պրիստավը և, գրպանից մի թերթ հանելով, սկսեց կարդալ երդուեալների անունները, նայելով նրանց վրայ, ում անունը կարդում էր, երբեմն պէնսնէի վրայից, երբեմն նրա մէջով:

—Պետական խորհրդական Ի. Մ. Նիկիֆորով:

—Ես եմ,—ասաց սիրունատես պարոնը, որ գիտէր բոլոր դատաստանական գործերը:

—Պաշտօնաթիղ գնդապետ Իւան Սեմեօնովիչ Իւանով:

—Այստեղ եմ,—ձայն տուեց պաշտօնաթիղի համադրեալով նիհար մարդը:

—2-րդ գիւղիայի վաճառական Պետր Բակլաչով:

—Կայ,—ասաց բարեհոգի վաճառականը, ամբողջ բերնով ժպտալով:—Պատրաստ ենք:

—Թիկնապահ գնդի պորուչիկ իշխան Դմիտրիյ Նիկիտինով:

—Ես եմ,—պատասխանեց Նիկիտինովը:

Դատաստանական պրիստավը պէնսնէի վրայից նայելով, առանձնապէս քաղաքավարի ու հաճելի ձևով գլուխ տուեց, կարծէք ջոկելով այդպիսով նրան ուրիշներից:

—Կապիտան Իւրիյ Դմիտրիևիչ Դանչենկօ, վաճառական Գրիգորիյ Եֆիմովիչ Կուլեչով, և այլն, և այլն:

Ամենքը, բացի երկուսից, ներկայ էին:

—Այժմ համեցէք դահլիճը, պարոններ,—ասաց պրիստավը, հաճելի շարժումով ցոյց տալով դուռը:

Բոլորը շարժուեցին տեղից և, մէկ-մէկի ճանապարհ տալով դռան մէջ, դուրս եկան միջանցքը և միջանցքից մտան ատենանի գահլիճը:

Մի մեծ ու երկար սենեակ էր դատարանի դահլիճը: Նրա մի ծայրում բարձրութիւն էր շինուած, ուր տանում էին երեք աստիճաններ: Բարձրութեան մէջտեղում դրուած էր մի սեղան, որի վրայ կանաչ մահուդ էր քցած՝ աւելի մուգ կանաչ ծոպերով: Սեղանի յետևում դրուած էին երեք բազկաթոռներ շատ բարձր կաղնի ու քանդակակերտ թիկունքներով, իսկ բազկաթոռների յետևում ոսկեզօծ չրջանակում կախուած էր թագաւորի պալձառ պատկերը: Աջ անկիւնում կախուած էր Քրիստոսի փշէպսակ պատկերը ու դրուած էր գրքակալը, նոյն աջ կողմում էր դտնուած և դատախազի բարձր ու թեք գրասեղանը: Չախ կողմում, խորքում, դատախազի գրասեղանի դէմ ու դէմը, գտնուած էր քարտուղարի սեղանը, իսկ հասարակութեան տեղից աւելի մօտ մի ճախարակաքաշ կաղնի վանդակ ու նրա յետևում մեղադրեալների դեռ պարապ նստարանը: Աջ կողմում, բարձրութեան վրայ շարուած էին երկու կարգ աթոռներ, նոյնպէս բարձր թիկունքներով, իսկ ներքեւում՝ սեղաններ փաստաբանների համար: Դահլիճը վանդակով բաժանուած էր երկու մասի: Այդ բոլորը առաջի մասում էր: Իսկ յետին մասը ամբողջապէս բռնուած էր նստարաններով, որոնք մէկ-մէկից բարձրանալով հասնում էին մինչև յետին պատը: Դահլիճի յետին մասում, առջևի նստարանների վրայ նստած էին չորս կին, բանուորուհիների կամ աղախիներին տեւքով, և երկու տղամարդ, — նոյնպէս բանուորներից, — որոնք ակներևաբար ծնուած էին դահլիճի սարք ու կարգի վեհութիւնից, ուստի և վախվիսելով էին փսփսում իրար մէջ:

Երգուեալ դատաւորներից յետոյ քիչ անցած՝ իր կողքահան քայլուածքով դուրս եկաւ մէջտեղ դատաստանական պրիստավը և բարձր ձայնով, որով կարծես ուզում էր վախեցնել ներկայ եղողներին, աղաղակեց.

—Ատենը գալիս է:

Բոլորը վեր կացան, և կողքի սենեակից դուրս եկան դահլիճի բարձրութեան վրայ դատաւորները, — առաջ նախագահողը իր մկաններով ու գեղեցիկ ծնօտամիրութիւններով, յետոյ ոսկեօղ ակնոցաւոր մոայլ անգամը, որ այժմ աւելի ևս մոայլ էր, որովհետև նիստից անմիջապէս առաջ պատահել էր իր աներորդուն, որ դատաստանական պաշտօնների թեկնածու էր. աներորդին

հազորդել էր նրան, թէ ինքը քրոջ մօտից է գալիս ու քոյրն յայտնել է, որ ճաշ չէ պատրաստելու:

— Այնպէս որ, երեխ, պանդոկ կը գնանք, — ասաց աներորդին ծիծաղելով:

— Ծիծաղելու ոչինչ չը կայ, — ասաց դատարանի մօայլ անդամն ու աւելի ևս մօայլուեց:

Վերջապէս դուրս եկաւ դատարանի երրորդ անդամը, միշտ ուշացող Մատֆէյ Նիկիտիչը, որ երկար միջուքով և մեծ ու վայր քաշուած բարի աչքերով մի մարդ էր: Այդ անդամը ստամոքսի դուժ (կատարր) ունէր և հէնց այդ առաւօտ, բժշկի խորհրդով, նոր ձևի բժշկութիւն էր սկսել, որ այդ օրը նրան սովորականից էլ աւելի յետ էր քցել նիստից: Այժմ, երբ նա կ'ընում էր բարձրութեան վրայ, նրա դէմքը կենտրոնացած արտայայտութիւն ունէր, որովհետև նա սովորութիւն ունէր ամեն տեսակ միջոցներով նախազուշակել այն հարցերի լուծումը, որ ինքն իրան տալիս էր: Այժմ էլ նա նախազուշակում էր, հաշուելով իր քայլերը, — եթէ առանձնասենեակի դռնից մինչև իր բաղկաթոռը արած քայլերի թիւը առանց մնացորդի բաժանուելու լինի երեքով, կը նշանակի բժշկութեան նոր եղանակը կը լաւացնի նրա ստամոքսի հիւանդութիւնը, իսկ եթէ չը բաժանուի առանց մնացորդի — չի լաւացնի: Ընդամենը 26 քայլ էր, բայց նա մի փոքրիկ քայլ էլ արեց և ուղիղ 27-րդ քայլին մօտեցաւ բաղկաթոռին:

Ոսկեկար օձիքներով համադրեալները հազած նախագահի ու անդամների կերպարանքները շատ ազդու էին: Նրանք իրանք էլ զգում էին այդ և երեքն էլ, կարծէք քաշուելով իրանց վահութիւնից, շտապով և աչքները համեստութեամբ քաշ քցելով, նստեցին իրանց քանդակակերտ բաղկաթոռների վրայ կանաչ մահուդով ծածկուած սեղանի յետևում, որի վրայ դրուած էին մի թանաքաման, մի քանի թերթ մաքուր թուղթ և զանազան մեծութեան ու նոր ծայր հանած մատիտներ: Դատաւորների հետ միասին դուրս եկաւ և դատախազի օգնականը: Նա նոյնպէս շտապ-շտապ, թղթակալը կոնստակին ու ձեռքը ճօճելով, անցաւ դէպի իր տեղը, պատուհանի կողքին, և իսկոյն սկսեց խորատուգուած կարդալ ու աչքի անցնել զանազան թղթեր, օգտուելով իւրաքանչիւր բույսէից, որպէսզի պատրաստուէր գործի համար: Այդ չորրորդ անգամն էր միայն, որ մեղադրում էր այդ դատախազը: Նա շատ փառասէր էր և հաստատ վճռել էր առաջ գնալ պաշտօնում, ուստի և անհրաժեշտ էր համարում դատապարտիչ վճիռ կայացնել տալ ամեն անգամ, երբ ինքը մեղադրելիս կը լինի:

Թունաւորման գործի էութիւնը նա գիտէր ընդհանուր գծերով և արդէն կազմել էր մեղադրական ճառի ծրագիրը, բայց նրան պէտք էին էլի մի քանի փաստեր,—այդ փաստերն էին, որ նա այժմ շտապ-շտապ դուրս էր գրում գործից։

Քարտուղարը նստած էր բարձրութեան հակադիր ծայրում և, պատրաստած լինելով այն բոլոր թղթերը, որոնք կարող էին պէտք գալ գործի ժամանակ, աչքի էր անցնում արտասահմանում տպուած մի յօդուած, որ նա երէկ ձեռք էր բերել կարգալու համար։ Նա ուզում էր խօսել այդ յօդուածի մասին մեծ միջոցաւոր դատաւորի հետ, որ նոյն հայեացքների տէր էր, ինչ որ ինքը, և խօսելուց առաջ ուզում էր ծանօթանալ այդ յօդուածի հետ։

VIII

Նախագահը, աչքի անցնելով թղթերը, մի քանի հարցեր տուեց դատաստանական պրիստավին ու քարտուղարին, և դրական պատասխաններ ստանալով, կարգադրեց, որ ներս բերեն մեղադրեալներին։ Վանդակի յետին գտնուող դուռը իսկոյն բացուեց, և ներս մտան երկու ժանդարմ՝ գլխարկներով և սրամերկ, իսկ նրանց յետից՝ մեղադրեալները, առաջ մի կարմրաչէկ ու պէպէնոտ տղամարդ, յետոյ՝ երկու կին։ Տղամարդը հագին ունէր կալանաւորի խալաթ, որ շատ լայն էր ու երկար նրա համար։ Դատարանը մտնելիս՝ նա ձեռները ձիգ կախ էր քցել անդրալարտիքի երկու կողքով և մեծ-մեծ մատները լայն չոկել, պահելով այդպիսով չափազանց երկար թևքերը ընկնելուց։ Առանց աչքերը բարձրացնելու դատաւորների ու հանդիսականների վրայ, նա ուշադրութեամբ նայում էր այն նստարանին, որի կողքով անց էր կենում։ Անցնելով նստարանի միւս կողմը, նա զգուշութեամբ ու տեղ տալով ուրիշներին նստեց նրա ծայրին և սկսեց, աչքերը նախագահի վրայ յառած, շարժել ծնօտների մկանները, ասեւ մի բան չնշալով ինքն իրան։ Նրա յետեւից ներս մտաւ մի հասակաւոր կին՝ կալանաւորուհու խալաթով ու գլխաւորով, սպիտակամոխրագոյն երեսով և անյօնք ու անթերթեւոնք կարմիր աչքերով։ Այդ կինը բոլորովին հանգիստ էր թւում։ Երբ նա անցնում էր իր տեղը նստելու, խալաթը մի բանի դէմ առաւ և նա խնամքով, առանց շտապելու, ազատեց խալաթը և նստեց։

Երբորդ մեղադրեալը Մասլօվան էր։

Հէնց որ նա մտաւ, դահլիճում եղող բոլոր տղամարդկանց աչքերը դարձան նրա վրայ և երկար ժամանակ չէին կտրոււմ

Նրա սև ու պսպղուն աչքերով սպիտակ դէմքից և խալաթի տակից դուրս ընկած բարձր կրծքից: Մինչև անգամ ժանդարմը, որի կողքով Մասլովան անցաւ, առանց աչքը հեռացնելու նայում էր նրան անցնելու ու նստելու ժամանակ և յետոյ, երբ Մասլովան նստեց, ժանդարմը, կարծես զգալով, թէ մեղք է գործել այդպէս նայելով, արագ շուռ եկաւ ու, իրան թափ տալով, աչքերը մխնեց ուղիղ իր առաջը գտնուող պատուհանին:

Նախագահը սպասեց, մինչև որ մեղադրեալները բռնեցին իրանց տեղեքը, և հէնց որ Մասլովան նստեց, նա դիմեց քարտուղարին:

Սկսուեց սովորական գործավարութիւնը, — թուեցին երգուեալ դատաւորներին, քննեցին չեկաձների հարցը, տուգանք դրեցին նրանց վրայ, որոշեցին հեռանալու թոյլտուութիւն ուղղների խնդիրքը և լրացրեցին չեկաձների պակասը պահեստի դատաւորներով: Յետոյ նախագահը ծալտեց տոմսալիները, լրցրեց ապակէ սափորի մէջ ու, մի քիչ քշտելով համազգեստի ոսկեկար թիւքերը, սկսեց մէկ-մէկ հանել, բանալ ու կարդալ տոմսակները: Յետոյ նախագահը վայր թողեց թիւքերը և քահանային առաջարկեց երգուեցնել ատենակալներին:

Դեղնած ու ուռած երեսով, դարչնագոյն վերարկուով, ոսկէ լանջախաչով ու վերարկուի կողքիցը կպցրած մի ուրիշ փոքրիկ շքանշանով ծերունի քահանան, ուռած ոտները դանդաղ փոխելով վերարկուի տակին, մօտեցաւ սուրբ պատկերի տակ դրուած գրքակալին:

Ատենակալները վեր կացան ու, խոնուելով, դիմեցին դէպի գրքակալը:

— Համեցէք, — ասաց քահանան, թխլիկ ձեռքովը չօլափելով լանջախաչը ու սպասելով, որ բոլորը մօտենան:

Երբ ատենակալները բոլորը վեր կլան աստիճաններովը բարձրութեան վրայ, քահանան՝ ճաղատ ու սպիտակած գլուխը մի կողմի վրայ ծռելով՝ անց կացրեց ուրարի մէջ և ցանցառ մաղերը գրտուելով դիմեց ատենակալներին...

Այդ քահանան՝ 46 տարի էր, որ ծառայում էր, և պատրաստուում էր 4 տարուց յետոյ տօնել իր յօրելւանը, ինչպէս նորերս տօնեց մայր տաճարի աւագ քահանան: Նահանգական դատարանում նա ծառայում էր դատարանների բացուելու օրից և շատ հպարտանում էր նրանով, որ երգուեցրել էր մի քանի տասնեակ հազար մարդ և որ իր դատամեալ հասակում էլ չարունակում է աշխատել յօգուտ եկեղեցու, հայրենիքի և ընտանիքի, որին, բացի տնից, թողնելու էր ոչ պակաս քան 30 հազար ուրլի արժող տոկոսաբեր թղթեր:

—Աջ ձեռներդ բարձրացրէք, իսկ մատներդ բռնեցէք այսպէս,—կամաց-կամաց ասաց նա ծերունական ձայնով, բարձրացնելով՝ բոլոր մատներն Վրայ փոսիկներ ունեցող թիւիկ ձեռքը և պողոնաց կազմելով այդ մատներից երեքով։—Այժմ կրքկնեցէք իմ յետևից,—ասաց նա ու սկսեց.—Խոստանում եմ և երգում ամենակարող Աստուծով, Նրա Սուրբ Աւետարանի և Տէրունական Կենսարար Խաչի առաջ, որ այն գործի վերաբերմամբ, որի համար...—ասում էր նա, ընդհատում անելով ամեն մի նախադասութիւնից յետոյ։—Մի իջեցրէք ձեռներդ, այսպէս բռնէք,—դիմեց նա մի երիտասարդի, որ իջեցրել էր ձեռքը...—որ այն գործի վերաբերմամբ, որի համար...

Ծնօտամիբուքաւոր սիրունատես պարոնը, գնդապետը, վաճառականը և ուրիշները մատները քահանայի պահանջածի նման էին բռնել և ձեռները, կարծես մի առանձին հաճոյքով, շատ ուրոշ ու շատ բարձր էին պահում, միւսները կարծես այդ անում էին ակամայ և անորոշ կերպով։ Ոմանք շատ բարձր ձայնով էին կրկնում խօսքերը, կարծես կռուի պատրաստուելով և այնպիսի արտայայտութեամբ, որ ասում էր՝ իսկ ես այնուամենայնիւ կ'ասեմ ու կ'ասեմ, իսկ միւսները միայն չչնչում էին, յետ էին ընկնում քահանայից ու յետոյ, կարծես վախենալով, անժամանակ հասնում էին քահանայի յետևից. ոմանք պինդ-պինդ ու յոխորտալից ձևով էին պահում իրանց իրար հուպ տուած երեք մատները, կարծես վախենալով ինչ որ բաց թողնել ձեռքից, իսկ միւսները թոյլ էին թողնում մատները ու յետոյ նորից կուշ բերում։ Երգումից յետոյ նախագահը առաջարկեց երգուեալներին մի աւագ ընտրել իրանց մէջից։ Երգուեալները վեր կացան ու, խռնուելով, անցան խորհրդակցական սենեակը, ուր գրեթէ բոլորը իսկոյն հանեցին պապիբոսները ու սկսեցին ծըլսել։ Մէջներից մէկը առաջարկեց աւագ ընտրել սիրունատես պարոնին և բոլորը իսկոյն համաձայնեցին ու, վայր քցելով ու հանգցնելով քնթուկները, վերադարձան դահլիճ։ Ընտրուած աւագը յայտնեց նախագահին, թէ ով է ընտրուել, և բոլորը, միմեանց ոտների վրայով քայլելով, նորից երկու կարգ նստստեցին բարձրաթիկունք աթոռների վրայ։

Ամեն ինչ ընթանում էր անարգել, արագ և ոչ առանց հանդիսաւորութեան, և այդ կանոնաւորութիւնը, յաջորդականութիւնը ու հանդիսաւորութիւնը, ակներեւաբար, հաճոյք էին պատճառում մասնակցողներին, հաստատուելով նրանց մէջ այն համոզմունքը, թէ լուրջ ու կարևոր հասարակական գործ են կատարում իրանք։ Ներկիւղօ՞ւն էլ էր զգում այդ նոյն բանը։ Հէնց որ երգուեալները նստեցին տեղները, նախագահը

ճառ ասաց նրանց՝ իրանց իրաւունքների, պարտականութիւնների ու պատասխանատւութեան մասին։ Ճառն ասելիս, նախագահը անդադար փոխում էր իր դիրքը, — մէկ կոթնում էր ձախ կոտն վրայ, մէկ՝ աջ կոտն վրայ, մէկ բազկաթոռի մէջքին, մէկ, նրա բազուկներին, երբեմն հաւասարեցնում էր թղթի եզրները, երբեմն շփում էր թղթահատը, երբեմն էլ շօշափում մատիւր։

Նրանց իրաւունքները, նրա ասելով, կայանում էին նրանում, որ նրանք կարող էին նախագահի միջոցով հարցեր տալ մեղադրեալներին, կարող էին մատիտ ու թուղթ ունենալ և կարող էին զննել իրեղէն ապացոյցները։ Նրանց պարտականութիւնը կայանում էր նրանում, որ պէսքէ կեղծութեամբ չը դատէին, այլ արդարութեամբ, պատասխանատւութիւնն էլ կայանում էր նրանում, որ եթէ չը պահէին իրանց խորհրդակցութիւնների գաղտնիքը կամ յարաբերութիւններ օկսէին կողմնակի մարդկանց հետ, պատժի կ'ենթարկուէին։

Բոլորը լսում էին պատկառոտ ուշադրութեամբ։ Վաճառականը, դինու հոտ տարածելով շուրջը ու զսպելով աղմկալից բիկոցը, զլխով հաւանութեան նշաններ էր անում ամեն մի նախագասութեան վերջում։

IX

Վերջացնելով ճառը, նախագահը դիմեց մեղադրեալներին։

— Սիմօն Կարտինկին, վեր կացէք, — ասաց նա։

Սիմօնը շղայնաբար վեր թռաւ։ Ծնօտների մկանները ըսկսեցին աւելի ևս արագ շարժուել։

— Ձեր անունը։

— Սիմօն Պետրօւ Կարտինկին, — արագ-արագ ասաց նա ջախջախ ձայնով, ակներևաբար առաջուց պատրաստուած լինելով պատասխանելու։

— Ձեր կոչումը։

— Գիւղացի եմ։

— Ո՞ր նահանգից ու գաւառից։

— Տուլայի նահանգի, Կրասնիվնսկի գաւառի, Կուպեանսկի վոյստի Բօրկի գիւղից։

— Քանի տարեկան էք։

— Նրեսուն երեք. ծնուել եմ հազար ութ հարիւր...

— Ի՞նչ հաւատի էք։

— Ռուս, ուղղափառ հաւատի։

— Պսակուած էք։